

11-12(586-587)

15.05.2020

Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել գիմաստությունն եւ գիտարար, իմանալ զբանս հանճարոյ

ԼՍԱՐԱՐ

Лусарар

ԿՐԹԱԳԻՏԱԿԱՆ ԹԵՐՐ

Lusarar

ՄԻԱՍԻՆ ԿԵՐՏԵՆԵ ՄԵՐ ՀՎՂԹԱՆԱԿՆԵՐԻ ԲԱՐՉՐ ԱՇՏԱՐԱԿԸ

Մայիս՝ հաղթանակների ամիս: Սա չպիտի ընդունել որպես միայն նշանաբան կամ քարոզչական պատահառ, թեպետ հենց այս ամսվա հետ են կապված մեր ամենակարևոր հաղթանակները՝ Ավարայրից մինչև Շուշի: Հայ ժողովրդի հազարամյա պատմությունը ցույց է տվել, որ մենք հաղթել ենք այն ժամանակ, երբ միաբան ենք եղել, ուսուսի և իրար նեցուկ: Այս իմաստով մայիսը տարվա մյուս ամիսների շարքում կարելի է առանձնացնել առաջին հերթին միասնության ու միաբանության անտրոհելի խորհրդով, առանց որի հազիվ թե կարողանայինք հաղթանակներ նվաճել Ավարայրում, Սարդարապատում, Շուշիում:

Մեծ փիլիսոփայի հայտնի դրույթը, ըստ որի՝ հաղթանակի համար պետք է երեք բան՝ ոգի, հաց և զենք, հնարավոր է դարձյալ միակամության դեպքում: Հատկապես ոգին, որը փիլիսոփան առաջնային էր համարում, միաբանության համաձուլյ զրսևորում է և կարող է գործել լինել բացառապես մեր հավաքական կերպարի մեջ, որին մենք կոչում ենք ֆիդայի, ազատամարտիկ, հայ զինվոր...

Ճակատագիրը հայի համար այսպիսի ուղի է կանխանշել, նաև ուսուցանելով մշտագոյության ծանր դարը: Բայց մենք ոչ թե պիտի անցյալին նայենք ցավի և ափսոսումի միջով, այլ դարերում թողած մեր հպարտության ծվենները համբերատար հավաքենք ու ամբողջացնենք՝ մեզ հետագա հաղթանակների նախապատրաստելով:

Պատմությունը մեզ մի ուրիշ դաս էլ է տվել՝ հաղթանակը պահելն ավելի դժվար է, քան այն նվաճելը: Այս համատեքստում ավելի է շեշտվում ազգի միասնության հրամայականը, որովհետև ամենար է տևական հարբած մնալ հաղթության բերկրանքով: Հիշենք ու չմոռանանք, որ՝ «քնում են գետերն ու քամին, սակայն չի քնում երբեք թշնամին», իսկ մեր աշխարհագրական դիրքն այնպիսին է, որ պարտավորված ենք միշտ զգոն լինել, թույլ չտալ, որ իրար ապավեն մեր ուները թեկուզ աննշան չափով հեռանան իրարից: Մի փոքրիկ ճեղքն անգամ բավական է, որ օծակերպ ոտխալը սողոսկի մեր մեջ, և այդժամ ստիպված կլինենք նոր ավարայրներ մղել: Իսկ եթե այնուամենայնիվ Ավարայր, ապա միայն՝ Մասիսի փեշերին, Սասունում և Իգդիրում, Վանում և Մուշում: Համեմատությունն այս դեպքում, կարծում ենք, շատ տեղին է. հրեաները մեկուկես հազարամյակ անց իրենց պետությունն են հիմնել նախնայաց հողում՝ բազմամիլիոն արաբական աշխարհի աչքի առաջ...

Շուշին վերջին նվաճումը չէ, այն նոր սկիզբ է, մի հարթակ, որի վրա պետք է աստիճան առ աստիճան կերտվի մեր հետագա հաղթանակների բարձր աշտարակը: Այդ աստիճաններով բարձրանալը միասին՝ սերնդեսերունդ փոխանցելով ազգի միասնության դրոշմը: Ի հեճուկս բոլոր նրանց, ովքեր փորձում են անտեսել արցախցու ազատ կամարտահայտության իրավունքը, ձևացնում, թե չեն ճանաչում ու չեն ընդունում Արցախի Հանրապետության հպարտ գոյությունը աշխարհի մյուս պետությունների շարքում: Հանուն Ազատամարտում նահատակված հայ քաջորդիների, որոնց անունները մի-մի հուշարձան են մեր հուշերի պանթեոնում:

Մայիս՝ հաղթանակի ու միասնության ամիս. այս երկուսի հզոր խորհրդով հենվենք անցյալի վրա, կառուցենք ներկան ու ապահովագրենք մեր լուսավոր ապագան:

Շնորհավոր բոլորիս ճշատոնը:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

Հան ՍԱՀՅԱԼ



ՀԱՅՐԵՆԻՔԻՍ

Մենք գիտենք մարտնչել կյանքում, Մենք գիտենք հառաչել ու լալ, Ծովի պես շառաչել գիտենք եվ կանչել առվի պես զուլալ, Ամպի պես գիտենք որոտալ, Սոսափել սոսու պես մի պերճ, Հողմի պես ոլորել գիտենք, Հովի պես օրորել անվերջ: Մենք գիտենք ամենից ահեղ Հեղեղի հորձանքում լողալ, Ցասման գոռ փոթորկից պայթել եվ սիրո քնքշանքից դողալ: Մենք գիտենք միտրվել երկինք եվ ծովի հատակը սուզվել, Մի ծաղկի մահով վշտանալ, Մի բացվող բողբոջով հուզվել: Ինչ էլ որ պատահի կյանքում, Ամենուր գորանալ գիտենք, Երագով տաքանալ ցրտում, Հրդեհում զովանալ գիտենք: Մենք գիտենք հաց քամել հողից եվ բախտի լույս գտնել հանքում եվ գիտենք, որ կյանքի համար Մենք թեզ ենք պարտական կյանքում: Մենք թեզնով ներշնչվել գիտենք եվ գիտենք թեզ համար մեռնել եվ անգամ վիրավոր ծեռքով Հաղթության դրոշակ բռնել:



ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏԸ ՀՎՂԹԱՀԱՐՈՒՄ Ե ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

ՍՏՈՐԱԳՐՎԵԼ Ե ՀԱՄԱՅՆՆԱԳԻՐ ԱՆ ԿԳՍՆ ԵՎ ԿԽՄԿ ՄԻՋԵՎ

Համավարակով պայմանավորված՝ Արցախում կրթությունն իրականացվում է հեռավար եղանակով: Արցախի կրթության, գիտության և սպորտի նախարարության դիտարկումներից պարզվել է, որ հեռավար կրթությանը խոչընդոտող մի շարք հանգամանքներից է այն, որ երեխաների մի զգալի մասը, ինչպես նաև ուսուցիչներ, չունեն համակարգիչ և տեխնիկական այլ միջոցներ: Նախարարությունը փորձել է գտնել գործընկերներ, որոնք կարող են աջակցել լուծելու այդ խնդիրը:

Մայիսի 11-ին ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության և Արցախի Հանրապետությունում Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ) միջև ստորագրվեց համագործակցության համաձայնագիր: «Կրթության հասանելիության ծրագրի վերջերս կատարված գնահատման արդյունքներով հարյուրավոր դպրոցահասակ երեխաներ և ուսուցիչներ չեն կարողանում պատշաճ կերպով մասնակցել ուսումնառության հեռավար համակարգին, և այդ վիճակում մեծ մասամբ տուժում են սոցիալապես խոցելի խմբերի երեխաները՝ հանձնին շփման գծի մոտ գտնվող համայնքներում ապրող, բազմազգային ընտանիքների, խնամքի և գիշերօթիկ հաստատություններում ապրող, հատուկ կարիքներով՝ մեծ մասամբ ֆիզիկական հաշմանդանություն ունեցող, միայնակ ծնողի երեխաների: Բացի այդ, ուսուցիչների շրջանում սարքերի և պլանշետների պակասը նույնպես բացասական ազդեցություն է թողնում հեռավար կրթության գործընթացի լիարժեք իրականացման վրա, և արձագանքելով այս մարտահրավերներին՝ Կարմիր խաչի միջազգային կոմիտեն պատրաստ է սարքեր տրամադրել»,- ասաց ԿԳՍ նախարար Նարինե Աղաբալյանը՝ մշտելով, որ Համաձայնագրով Կարմիր խաչը նախարարությանն է տրամադրում 109 պլանշետ, որոնք նախատեսված են կոնկրետ համայնքների աշակերտների և ուսուցիչների համար: Այդ սարքերը, ըստ ԿԽՄԿ Արցախի առաքելության որոշման, բաշխվել են Թալիշի (11 սարք) և Տոնաշենի (4 սարք, 2 Wi-Fi) դպրոցահասակ երեխաներ ունեցող ընտանիքներին՝ մեկական, Մատաղիսի (16 սարք), Մաղավուզի (23 սարք) երեք և ավելի երեխաներ ունեցող ընտանիքներին՝ մեկական, երեխաների խնամքի ու պաշտպանության

թիվ 1 գիշերօթիկ հաստատությանը՝ 12 սարք:

Կարմիր խաչը պլանշետներ է տրամադրել նաև ուսուցիչներին՝ հեռավար կրթության գործընթացի լիարժեք իրականացման համար. Մարտակերտի հ. 1 դպրոցին՝ 17 սարք, Վաղուխասի և Ջազիկի դպրոցներին՝ 5-ական, Մարտունու հ. 1 դպրոցին՝ 8, Ասկերանի միջնակարգ դպրոցին՝ 1, Խրամորթի 5, Հաղորթի հ. 1 դպրոցին՝ 2 սարք:



Ն. Աղաբալյանն ասաց, որ դա շատ կարևոր ծրագիր է, քանի որ տեխնիկական միջոցների կարիք ունեցողների թիվը մեծ է: Նրա սեղանին են 300-ի հասնող դիմումներ: Բայց քանի որ հնարավոր չէ բոլորին ապահովել միանգամից (գլխավոր պատճառը շուկայում այդ սարքերի բացակայությունն է), ընտրել են թիրախներ: Դրանք, ինչպես վերը նշվեց, խոցելի խմբերն են, ինչպես նաև այն երեխաները, որոնք, ապրելով մի բնակավայրում, հաճախում են կողքի բնակավայրի դպրոցը:

Նախարարությունն այս ընթացքում մի շարք գործընկերներ է ունեցել. ՀՀ նախագահի որդիներն են օգնել Հարավի, Մեխակավանի և Հաղորթի շրջանի մի շարք գյուղերի երեխաներին, «Վալեթս» բարեգործական հիմնադրամը՝ հիմնականում Մարտակերտի շրջանի մի շարք գյուղերի երեխաներին, «Ապագա սերունդներին» հիմնադրամը՝ իր հովանավորության տակ գտնվող երեխաներին, «Հայրենիք» հիմնադրամը՝ Քաջաթաղի շրջանի դպրոցներին, կարիքավոր ընտանիքներին մի քանի սարք է տրամադրել «Լաբաթաղ Տեխկոմը»:

Նախարարի խոսքով՝ կարող էին ավելի շատ կարիքավորների օգնել, եթե Արցախի և

Հայաստանի շուկաներում այդ սարքերը լինեին, բայց քանի որ այսօր ամբողջ աշխարհն է անցել հեռավար կրթության ու գործունեության, որանք ձեռք բերելը դարձել է խնդիր: Իսկ նոր խմբաքանակներ պարզ չէ, թե երբ տեղ կհասնեն: Դրա համար էլ եղածը փորձել են ձեռք բերել և տրամադրել բազմազգային ընտանիքներին, չնայած նույնիսկ այդ կատեգորիայի բոլորին չեն կարողացել ապահովել:

ԿԽՄԿ Արցախի առաքելության ղեկավար Պիեռ-Էմանուել Դյուբրուեն ընդգծեց, որ ԿԳՍ նախարարության հետ համագործակցությունը բարձր է գնահատում, և այն բարձր մակարդակի վրա է: «Վիրուսը, ցավոք, շարունակվում է, և մենք կարևոր ենք համարում, որ աշակերտները շարունակեն ուսումը: Պլանշետները հետագայում էլ պետք կան ուսուցման գործընթացում»,- ասաց նա:

Ն. Աղաբալյանը հաստատեց, որ հեռավար կրթությունը դարձել է կրթական գործընթացի անբաժանելի մասը, և տեխնիկական միջոցները հարկավոր կլինեն այսուհետև և:

Պարոն Դյուբրուեն հավելեց, որ ստեղծված իրավիճակում ԿԽՄԿ օգնությունը Արցախի բազմակողմ կողմնակցության կրթությունը օգնել է միայնակ ծերերին դրամական օգնության ձևով (50-հազարական դրամ), Արտակարգ իրավիճակների ծառայությանը և Առողջապահության նախարարությանը՝ տարբեր սարքերով ու փնտախառնիչ նյութերով: «Մենք Լեռնային Ղարաբաղում ենք 1992-ից և ուրախ ենք օգնել նրան ու պատրաստ ենք հետագայում էլ շարունակել մեր համագործակցությունը, տեսնել, թե էլ ինչու կարող ենք օգտակար լինել կրթության, գիտության և սպորտի նախարարությանը»:

Ն. Աղաբալյանը շեշտեց, որ Արցախի չճանաչված լինելու պատճառով ԿԽՄԿ-ն միակ միջազգային կազմակերպությունն է, որ օգնում է Արցախին կորոնավիրուսի մարտահրավերները հաղթահարելու համար: «Անգամ ՅՈՒՆԵՍԿՕ-ն, որն այս իրավիճակում օգնություն է ցույց տալիս տարբեր երկրների, Արցախին որևէ օգնություն չի ցուցաբերում: Եվ դրա համար շատ ավելի գնահատելի է Կարմիր խաչի առաքելության այս նախաձեռնությունը»:

Տես՝ նաև էջ 2

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏԸ ՀԱՂԹԱՀԱՐՈՒՄ Է ՍԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

Ի՞նչ սկզբունքով է առաջնորդվել ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարությունը ուսումնական գործընթացը հարթ կազմակերպելու համար. այս մասին խոսել է ԿԳՍ նախարար Նարինե Աղաբալյանը մայիսի 7-ին կայացած առցանց ասուլիսի ժամանակ: Նախ նշել է, որ այս իրավիճակը աննախադեպ է ոչ միայն Արցախի, այլև ամբողջ աշխարհի համար, ու այն չի կարող կարգավորվել գործող օրենսդրությամբ, իրավական կարգավորումներով, և ոլորտի պատասխանատուները փորձել են իրավիճակային լուծումներ գտնել: Դրանք ինչ-որ տեղ համընկնում են սոցիալական հարթակների, ուսումնական ռեսուրսների օգտագործման, գործիքակազմի առումով, բայց կան նաև տարբերություններ: Ն. Աղաբալյանի տեղեկատվությամբ՝ նախարարությունն այս ընթացքում անընդհատ կապի մեջ է եղել շրջանների և մայրաքաղաքի կրթության և սպորտի բաժինների, դպրոցների պատասխանատուների հետ, և փորձել են կարգավորել գործընթացը. «Քանի որ սա աննախադեպ իրավիճակ է, մենք բնականաբար չէինք կարող որևէ մեկին որևէ բան պարտադրել, որովհետև պարտադրելու համար նախ պետք է ապահովել բոլոր միջոցները, ինչը հնարավոր չէր: Դրա համար մենք փորձել ենք հընթաց կազմակերպել գործընթացը և նաև աջակցություն ցուցաբերել ուսուցիչներին և աշակերտներին»: Նա հավելեց, որ նախարարությունը գործել է արտակարգ ռեժիմով, և հատկապես տեսչական խումբը ամենօրյա աշխատանք է կատարել. համապատասխան ուսումնական նյութեր է հավաքագրել, տեղադրել նախարարության կայքէջում՝ հղելով աշակերտներին և ուսուցիչներին: Նշեց նաև «Գարաբաղ Տելեկոմի» հետ անընդհատ համագործակցությունը, քանի որ առցանց ուսուցման խոչընդոտներից էին համացանցը և տեխնիկական միջոցները: ԴՏ-ն փորձել է ընդլայնել առցանց ուսուցման հնարավորությունները և վերացրել է որոշ սահմանափակումներ Zoom հարթակի

հետ կապված, և ներկայումս բանակցություններ են տարվում ԴՏ-ի հետ առցանց ուսուցման Zoom հարթակը առանձնացված սերվերի միջոցով Արցախի դպրոցականների համար ավելի հասանելի ու մատչելի դարձնելու ծրագրի իրականացման ուղղությամբ:

Քանի որ մի շարք դպրոցներ չեն կարող հեռավար ուսուցում կազմակերպել համացանցի բացակայության պատճառով (դրանք հիմնականում փոքր դպրոցներն են), նախարարությունը խանութից ձեռք է բերել ավելի



քան 110 նոութբուքներ, պլանշետներ՝ դրանք ներբեռնելով անհրաժեշտ ուսումնական նյութերով և տրամադրել փոքր դպրոցներին, որպեսզի անգամ համացանցի բացակայության պայմաններում աշակերտները կարողանան օգտագործել այդ նյութերը: «Ընդունելով համավարակի մարտահրավերը և հասկանալով, որ դա կարող է տևական լինել՝ ստեղծված իրավիճակի առաջին իսկ օրերից նախարարությունը նախաձեռնել է հետազոտություն «Հեռավար ուսուցումը Արցախում» թեմայով», - ասաց Ն. Աղաբալյանը: Հետազոտությունը շարունակվում է, բայց արդեն կան հարցման որոշ արդյունքներ: Այսպես, 2321 ուսուցիչ, որը կազմում է հանրապետության ուսուցիչների կեսից ավելին, մասնակցել է այդ հարցմանը, ինչի արդյունքում պարզ է դարձել, որ հետազոտությանը մասնակցած ուսուցիչների 83,5 %-ը իրականացրել է հե-

ռավար ուսուցում, ինչը բարձր ցուցանիշ է, և հենց դա էլ հիմք ընդունելով՝ նախարարությունը որոշում է կայացրել իրավունք տալ ուսուցիչներին հեռավար ուսուցման արդյունքները ևս գնահատել և ձևավորել աշակերտների կիսամյակային ու տարեկան գնահատականները:

Տնօրենների հետ հարցման արդյունքներով նախարարությունը պարզել է, թե կոնկրետ որ դպրոցներում և որ առարկաները չեն պարապել և ինչու չեն պարապել: Առցանց չպարապելու պատճառներից են տվյալ առարկայի առանձնահատկությունները հեռավար ուսուցման կազմակերպման արդյունավետության տեսանկյունից: Կան ուսուցիչների և ծնողների անտարբերությունը, համացանցի և տեխնիկական միջոցների բացակայությունը մատնանշող տվյալներ: Վերջինիս առումով ամենախոցելի է Քաշաթաղի շրջանն է, որտեղ 20-ից ավելի դպրոցներում կան խնդիրներ հեռավար ուսուցման հետ կապված: Իսկ Ստեփանակերտում և շրջաններում հիմնականում պարապել են, բացառությամբ ֆիզկուլտուրա, տեխնոլոգիա, շախմատ, երաժշտություն առարկաների:

Բացերը հիմնականում փոքր դպրոցներին են: Համացանցի և տեխնիկական միջոցների բացակայության պատճառով դրանց մեծ մասը չկարողացավ հեռավար ուսուցում իրականացնել: Նախարարը երախտագիտությամբ արտահայտվեց մի շարք հիմնադրամների և անհատ բարերարների մասին, որոնք տեխնիկական միջոցներ են տրամադրել դպրոցներին. «Հայրենիք», «Վալեքս», «Ապագա սերունդներին» բարեգործական հիմնադրամներ, «Կարմիր խաչ», ՀՀ նախագահի որդիներ Հայկ և Վարդան Սարգսյաններ և մի շարք այլ անհատ բարերարներ: Սահմանվել է այդ տեխնիկական միջոցների բաշխման առաջնահերթություն: Դա հատկապես վերաբերում էր այն գյուղերին, որտեղ դպրոց չկա, և երեխաները հաճախում են

հարևան բնակավայրերի դպրոցներ: Ն. Աղաբալյանն ասաց, որ անհատական տեխնիկական միջոցի կարիք չատերն ունեն, նախարարությունը ստանում է մեծ թվով դիմումներ, և հնարավոր չէ բոլորին ապահովել: Եվ հիմնական պատճառը բարերարների բացակայությունը չէ, այլ այն, որ այսօր աշխարհում մեծացել է տեխնիկական միջոցների նկատմամբ պահանջարկը, քանի որ ամբողջ աշխարհն է անցել հեռավար ուսուցման, և ընդհանրապես հեռավար գործունեության և բնականաբար շուկայում առկա տեխնիկական միջոցները շատ արագ սպառվել են:

Ն. Աղաբալյանը դրվատանքով արտահայտվեց ուսուցիչների ցուցաբերած պատասխանատվության մասին. «Ընդհանրապես այս ամբողջ գործընթացում կարևորագույն դերակատարները եղել են հենց ուսուցիչները: Առանց պարտադրանքի, առանց հրահանգի նրանք աշխատել են և փորձել են ստեղծել այլընտրանքային ուսուցման հնարավորություն: Ստեղծված իրավիճակի պայմաններում նորից վերաբնակվել է ուսուցիչ դերակատարությունը: Եթե բժիշկները օր ու գիշեր պայքարում են հիվանդներին բուժելու համար և իսկական պատերազմի մեջ են, մեզ մոտ բժիշկներից ոչ պակաս աշխատանք կատարում են ուսուցիչները» Նախարարը շեշտեց, որ հասարակությունը և իշխանությունները պետք է վերաբնակվեն և վերագնահատեն ուսուցչի աշխատանքը:

Ստեղծված պայմաններում Ն. Աղաբալյանը մատնանշեց մեկ դրական միտում ևս. «Մենք պետք է այսուհետ հեռավար կրթության եղանակն օգտագործենք: Սա իսկապես լավ հնարավորություն է, որպեսզի մեր ուսուցիչները վերապատրաստվեն և կարողանան իրականացնել հեռավար կրթություն, իսկ աշակերտները հասկանան, որ սմարթֆոններն ու համակարգիչները միայն խաղերի կամ ժամանցի համար չեն, դրանք կարելի է օգտագործել որպես ուսումնական գործիքներ: Եվ հեռավար կրթությունը պետք է օգտագործենք այն դպրոցների համար, որտեղ չկան մասնագետներ»:

Ս. ԽԱՀԱՏՐՅԱՆ

2019-2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՍՓՈՓՈՒՄ

Հաշվի առնելով Արցախի Հանրապետությունում Քովիդ-19 համավարակի դեմ պայքարի արտակարգ պայմաններում ուսումնական գործընթացի կազմակերպման առանձնահատկությունները՝ Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարությունը Արցախում 2019-2020 ուսումնական տարվա ամփոփման, ուսումնական պլանի և ուսումնական ծրագրի կատարման առնչվող խնդիրների լուծման վերաբերյալ հայտնում է հետևյալը.

2019թ. դեկտեմբեր-2020թ. մարտ ամիսներին հանրապետությունում գրիպի և սուր շնչառական վարակների տարածման հետևանքով Արցախի ուսումնական հաստատություններում մեծ թիվ են կազմել սովորողների բացակայությունները՝ առանձին դպրոցներում գերազանցելով սահմանված սանիտարահիգիենիկ նորմը: 2020թ. փետրվար-մարտ ամիսներին հանրապետությունում ստեղծված համաճարակային իրավիճակին արձագանքման միջոցառումներով պայմանավորված, ուսումնական գործընթացը հանրապետության ուսումնական հաստատություններում իրականացվել է ընդհատումներով, իսկ 2020թ. մարտի 13-ից նոր կորոնա-

վիրուսի ներթափանցումն Արցախ կամայարգելելու նպատակով փակվել են բոլոր ուսումնական հաստատությունները՝ խթանելով ուսուցման բնականոն ընթացքը:

Ցուցաբերելով բարձր պատասխանատվություն և մանկավարժական վարպետություն՝ ուսումնական հաստատությունների ուսուցիչների հիմնական մասը, համագործակցելով աշակերտների և վերջիններիս ծնողների հետ, կարճ ժամանակում ուսումնասիրելով ու յուրացնելով ժամանակակից կրթական տեղեկատվական հնարավորությունները, անցում է կատարել ուսուցման կազմակերպման այլընտրանքային, հիմնականում՝ հեռավար եղանակին:

Արտակարգ ռեժիմի պայմաններում ուսուցիչներից շատերն աշխատել են մեծ ծանրաբեռնվածությամբ, նվիրվելով ու արժանապատվությամբ ընդունելով և դիմագրավելով ստեղծված դժվարին իրավիճակում մեր երեխաների ուսուցման շարունակականության ապահովման լրջագույն մարտահրավերին:

Նույն վարքագիծն են դրսևորել հազարավոր աշակերտներ՝ սովորելով և հանուն ուսման հաղթահարելով բազմաթիվ խոչընդոտներ:

Վերոնշյալը հաշվի առնելով՝ Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարությունը թույլատրում է՝

Ուսումնական տարվա ամփոփում

- 2019-2020 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում փաստացի պարապած (առկա և հեռավար) դասաժամերի հաշվառումը մատչանում:
- Մատյաններում, այդ թվում՝ էլեկտրոնային մատյանում գրանցված ընթացիկ գնահատականների հիման վրա՝ 2-րդ կիսամյակի, կիսամյակային գնահատականների հիման վրա՝ տարեկան գնահատականների ձևավորումը:
- Հեռավար կրթությանը չմասնակցած աշակերտների կիսամյակային և տարեկան գնահատականների ձևավորումը՝ մինչև մարտի 13-ը նշանակված գնահատականների հիման վրա:
- Սովորողի՝ դասարանից դասարան փոխադրումը և ավարտումը՝ առանց փոխադրական, ավարտական և պետական ավարտական քննությունների, ուսումնական հաստատության մանկավարժական խորհրդի որոշման համաձայն:

Ուսումնական պարապմունքներ և ուսումնական տարվա ավարտ

Արցախի Հանրապետության ուսումնական հաստատություններում ուսուցումը շարունակվում է հեռավար եղանակով՝ մինչև ԿԳՍ նախարարության կողմից այլ որոշման մասին ծանուցումը:

Ուսումնական պարապմունքներն ավարտվում են. հնգօրյա ուսումնական շաբաթի դեպքում՝ մինչև մայիսի 22-ը, վեցօրյա ուսումնական շաբաթի դեպքում՝ մինչև մայիսի 23-ը: Ավարտական ատեստատները տրվում են մինչև մայիսի 25-ը:

Բաց թողնված դասերի լրացում

Հաշվի առնելով, որ ստեղծված իրավիճակում Արցախի Հանրապետության հանրակրթական դպրոցներում ուսումնական ծրագրով բաց թողնված դասերի ծավալները տարբեր են, ընդհանուր հանրակրթական առարկաների ծրագրերը լրացվում են ուսումնական հաստատությունների լիազոր մարմինների կողմից ներկայացված՝ ԿԳՍ նախարարության կողմից հաստատված պլան-ժամանակացույցի համաձայն:

Բարձրագույն, միջին մասնագիտական և նախնական մասնագի-

տական (արհեստագործական) ուսումնական հաստատություններ

- Բուհերի առկա և հեռակա ուսուցման համակարգերի 2-րդ կիսամյակի քննաշրջանը և ամփոփիչ ատեստավորումը կազմակերպվում է բուհական ինքնավարության սկզբունքով, բարձրագույն ուսումնական հաստատության հաստատած եղանակով:
- Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների 2019-2020 ուսումնական տարվա արդյունքների ամփոփումը հանրակրթության մասով կազմակերպվում է հանրակրթական ուսումնական հաստատությունների համար սահմանված սկզբունքներով, մասնագիտական առարկաներից քննությունները՝ տվյալ ուսումնական հաստատության կողմից կառավարման մարմնի՝ խորհրդի հաստատած ձևով:
- Ուսումնական հաստատություններում համավարակի կանխարգելման ընդհանուր կանոնների պահպանումը պարտադիր է:

ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարություն

ԱՌԱՋ ԵՎ ՆՇՈՒ

ՆԱԽԱԳԱՀ ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԸ ՀԵՌԱՎԱՐ ԶՐՈՒՅԵԼ Է ՍՏԱՐՏԱԾ ԷԿՈԼՈՂՈՎԱԿԱՐԳԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉՆԵՐԻ ՀԵՏ

«Ստարտափների, նոր տեխնոլոգիաների զարգացման համար էական է ինչպես կրթական համակարգը, այնպես էլ համապատասխան միջավայրի ու պայմանների ստեղծումը»:

«Ստարտափի գործունեության մեջ շատ էական է ստեղծագործ մարդկանց ներգրավումը: Գիտեք, որ ամենամեծ խնդիրներից մեկը տաղանդավոր, երիտասարդ, լավ կրթված մարդկանց ներգրավումն է: Այս համատեքստում շատ կարևոր է դառնում կրթությունը: Համարվում է, որ մտածել ստեղծագործ, ինովացիոն միջավայրի մասին, առանց կրթության, -ասել է նախագահը: -Մենք փորք երկիր ենք, հեռու մեծ շուկաներից, բայց 21-րդ դարը նոր հնարավորություններ է բացում: Եթե կարողանանք ճիշտ հարաբերություններ կառուցել, ապա մեր զարգացման համար կարող ենք օգտվել նաև միջազգային հիմնադրամներից: Կարևոր է նաև, որ այն ստարտափները, անհատները, որոնք օգտվում են մասն ֆինանսական միջոցներից, ի վերջո

մասն ճայաստանում և դառնան Հայաստանի լավ գործարար քաղաքացիներ»:

Նախագահը պատահական չի համարել Միացյալ Նահանգներում ամենամեծ թվով ստարտափների առկայությունը՝ դա պայմանավորելով մի քանի հանգամանքով: «Նախև առաջ, շրջապատում կան շատ լավ համալսարաններ, երկրորդ՝ աշխարհի ամենամեծ էլեկտրոնային ընկերություններն այնտեղ են գտնվում: Սա է ձևավորում միջավայրը. շուկան, պահանջարկը, մասնագետները, բոլորը մեկ վայրում են: Սա ամերիկյան մոդելն է: ԱՄՆ-ն այսօր ունի ամենաշատ վենչուրային հիմնադրամները և ամենաշատ ստարտափները»:

Կան նաև այլ մոդելներ: Եթե վերցնենք Մեծ Բրիտանիան, ամենահայտնի կենտրոններից մեկը Քեմբրիջի համալսարանի գիտական քաղաքն է, որը ստեղծվել է Քեմբրիջի համալսարանից կից, որտեղ աշխատում են հսկայական թվով բարձր որակի մասնագետներ: Համալսարանի կողքին տեղակայված են Microsoft-ի, Apple-ի, այլ խոշոր տեխնոլոգիական ընկերությունների կենտրոնները: Ստեղծվել է մի տարածք, որտեղ ստարտափները կարող են գնալ և հեշտությամբ օգտվել

համալսարանից, կապ ունենալ մեծ բիզնեսի հետ և աճել»:

Ստարտափների զարգացման համար նախագահ Սարգսյանը կարևոր է համարել կրթություն-արդյունաբերություն-շուկա կապը: Այս համատեքստում նա անդրադարձել է նախագահական ATOM (Advanced tomorrow) նախաձեռնությանը: «Գաղափարը հետևյալն է. մեծ ընկերություններին բերել Հայաստան, որպեսզի համատեղ ստեղծվեն լաբորատորիաներ ծրագրավորման, արհեստական բանականության ոլորտներում, -ասել է նախագահը: -Ճիշտ կլինի, որ դրանք գտնվեն մեկ վայրում, որպեսզի կապ ունենան միմյանց հետ: ATOM-ը կազմված է լինելու երեք մասից: Առաջին մասը կղչվելու է Ապագայի թանգարան, որտեղ կցուցադրվի, թե կյանքն ինչպիսին է լինելու 20 տարի հետո: Երկրորդ մասը գիտական կենտրոնն է լինելու: Երրորդը՝ աշխարհի խոշոր տեխնոլոգիական ընկերությունների հետ, որոնք թվում են Microsoft-ը, Apple-ը, Siemens-ը, IBM-ը, Dassault-ն, Thales-ը, նախնական պայմանավորյալ կապերով արդեն կան ստեղծելու այնպիսի միջավայր, որը նույն է, ինչ ԱՄՆ Սիլիկոնյան հովտում, Ֆրանսիայում, Մեծ Բրիտանիայում, Գերմանիայում: Մենք միջավայրի,

ինչպես նաև շուկայի կարիք ունենք: Մենք արդեն ծրագրում ենք ATOM-ի ճարտարապետական լուծումները և արդեն իսկ ունենք շատ հետաքրքիր առաջարկներ»:

Պատասխանելով այն հարցին, թե կիրոնավորուհի համալսարանի կենտրոնով որ ոլորտներում են բացվել ի հայտ եկել, և ինչ լուծումներ կարող են առաջարկել ստարտափները, նախագահ Սարգսյանը երիտասարդներին խորհուրդ է տվել վերլուծել, թե ինչպիսին էր աշխարհը կորոնավիրուսից առաջ և ինչպիսին է լինելու հետո, ինչպես է փոխվելու աշխարհը, և մենք ինչպես ենք փոխվելու: Ինչ վերաբերում է այն ոլորտներին, որտեղ ստարտափները կարող են գործունեություն ծավալել, նախագահն ասել է, որ դրանք բազմաթիվ են:

«Առողջապահության ոլորտում թիրախը պետք է լինեն առանձին անհատի պաշտպանվածությունը և կանխատեսվող համաճարակների կանխարգելումը, - նշել է նախագահ Սարգսյանը: - Հետաքրքիր է լինելու նաև սննդի անվտանգության ոլորտը: Սա շատ էական ոլորտ է բոլոր պետություններում՝ սկսած ԱՄՆ-ից վերջացրած Հայաստանով: Մենք ունենք չորս հարևան երկիր: Պետք է

լինենք ինքնաբավ: Ամերիկայում են մեխանիզմներ, որով կարողանանք և արտադրել, վաճառել ավելցուկը, արտահանել այն, և՛ ստանալ մթերք այլ երկրներից: Եվ Հայաստանը, և Արցախն այս ոլորտում ունեն հսկայական պոտենցիալ՝ նոր տեսակի ուտելիքներ, որոնք կարող են արտադրել նոր տեխնոլոգիաներով և օգտագործելով նոր գաղափարներ:

Ստարտափը միայն էլեկտրոնայինը չէ: Ստարտափը և գյուղատնտեսականն է, և՛ սպասարկման ոլորտը, և՛ ֆինանսական գործիքները, - նշել է նախագահը: - Համաշխարհային շուկայում փոփոխություններ են տեղի ունենում: Դա նշանակում է, որ բանկային համակարգը փոփոխման ճանապարհին է: Մենք գնում ենք դեպի նոր էլեկտրոնային բանկային համակարգ և էլեկտրոնային սպասարկում: Հետևաբար, անհրաժեշտ են լինելու բազմաթիվ գործիքներ, որոնք դուք պետք է ստեղծեք, որպեսզի այդ համակարգերը լինեն արդյունավետ: Ցանկացած ոլորտում անելիք է լինելու: Մենք ավելի ենք գնահատելու մեր առողջությունը, դրա հետ կապված բնապահպանական խնդիրներ, ժամանցի կազմակերպումը: Բոլոր ոլորտներում մեզ համար լինելու են հնարավորություններ»:

1941-1945

ՇՈՒՅԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆԸ ՄԵՏ ՀԱՅՐԵՆԱԿԱՆԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

100-ամյակը թևակոխող Շուշիի մանկավարժական ուսումնարանը (այժմ՝ Արսեն Խաչատրյանի անվան հունամիտար քոլեջ) ուրույն դեր ու տեղ ունի Արցախի կրթամշակութային համակարգում՝ դառնալով միջին օղակի կադրերի պատրաստման դարբնոց:

Շուշիի մանկավարժականը 1940-1941 ուսումնական տարում փակվում է, հայկական բաժինը բռնի տեղափոխվում է Հաղորւթ, իսկ աղբբեջանականը՝ Աղղամ: Այն հեռու գնացող թուրքական քաղաքակառուցում էր: Հայ ուսանողների համար դժվար կլիներ հեռավոր Հաղորւթ սովորելու գնալ: Այն կատարվեց կրթօջախը փակելու միտումով:

Հայրենասեր մտավորականներ Սարգիս Աբրահամյանի (այն ժամանակ ԼՂ լուսժողովում էր), Արսեն Խաչատրյանի և ուրիշ նվիրյալների անձմվեր աշխատանքի շնորհիվ 1941-1942 ուստարում մանկավարժական ուսումնարանը Հաղորւթից Շուշի տեղափոխվում է Շուշի, և ուսումնական գործընթացը շարունակում Մարիամ Դուկասյանի անվան օրիորդաց դպրոցի շենքում, քանի որ Հայրենական պատերազմի տարիներին ռեպրեսիան շենքում տեղակայված էր զինվորական հոսպիտալը:

Մեծ Հայրենականի տարիներին ուսումնարանի մանկավարժական և ուսանողական կոլեկտիվների նշանաբանն էր՝ «Ամեն ինչ ռազմաճակատի, ամեն ինչ հաղթանակի համար»: Ռազմաճակատ մեկնած հազարավոր դարաբաղցիների շարքում էին նաև մանկավարժական ուսումնարանի տասնյակ ուսուցիչներ ու սաներ, որոնք մարտնչեցին մինչև հաղթանակ:

Պատերազմի օրերին հանրակրթական դպրոցներում պակասել էին ուսուցիչները: մեծ մասը մեկնել էր ռազմաճակատ: Նրանց փոխարինեցին ուսումնարանի բարձր կուրսերի ուսանողները: Նրանք աշխատանքի անցան մարզի հանրակրթական դպրոցներում:

Չնայած Հայրենականի դաժան օրերին ստեղծվել էին ծանր պայմաններ, այնուամենայնիվ, մանկավարժականի կոլեկտիվը հմուտ ու հեռատես տնօրեն Արսեն Խաչատրյանի ղեկավարությամբ, նրա եռանդուն ու քրտնաջան աշխատանքով կարողացավ հայրենիքի պաշտպանության դիրքերից իրականացնել բազմաթիվ խնդիրներ: Այդ ծանր օրերին կոլեկտիվը յուրօրինակ արդյունավետ ձևով էլ լուծել սովորողների գաղափարաքաղաքական, բարոյական, աշխատանքային, ռազմահայրենասիրական դաստիարակությունը, ուսուցման գործընթացի հետ կապված շատ հարցեր: Ուսանողներն ակտիվորեն էին մասնակցում հայրենասիրական բոլոր միջոցառումներին:

Պատերազմական շրջանի իրենց գրած շարադրություններում ուսումնարանի սովորողներն անսահման նվիրվածություն էին հանդես

բերում դեպի հայրենիքը և խոր ատելությամբ անարգանքի սյունին էին գամում ֆաշիստական համաշխարհայիններին ու անսահման հավատ դրսևորում բանակի, մեր ժողովրդի հաղթանակի նկատմամբ: Այդ ոգով գրված շարադրություններից բերենք մանկավարժական ուսումնարանի 1944թ. շրջանավարտ Ալեքսանդր Հակոբյանի անձնական արխիվում պահպանված մի օրինակ. «Ժողովրդային բազմազգ ժողովուրդն անհողողող է ու անպարտելի: Նա համակրած է միանական գաղափարներով՝ կռվել թշնամու դեմ մինչև արյան վերջին կաթիլը, և եթե հարկ է, զոհվել միայն հայրենիքի ազատության համար: Այս վեհ գիտակցությունն է, որ անմահացնում է ռազմի դաշտում ընկած հերոսների փառապանծ անունները: Ձեռիվ մեծ գործի, մեծ գաղափարների համար. ահա թե որն է ամենաթանկն ու ամենազանախատելի մարդու կյանքում»:

Ուշագրավ է, որ մանաստիպ շարադրությունները, բանաստեղծություններն ուսանողները կարդում էին հոսպիտալի վիրավոր զինվորների, ռազմաճակատ մեկնող երիտասարդների համար կազմակերպված ցերեկույթներից ու երեկույթներից:

1945թ. շրջանավարտ, 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ Ժորա Աբրահամյանի տրամադրած փաստաթղթերից մեկում պահպանվում է նման մի շարադրության օրինակ.

«Հայ ժողովուրդն աշխարհի այն հնագույն ժողովուրդներից է, որը բազում փորձությունների միջով է անցել: Գտնվելով ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող ճանապարհների խաչմերուկում՝ Հայաստանը ռազմատենչ շատ պետությունների համար կռվախմձոր է եղել, պատերազմների թատերաբեմ դարձել: Ու ամեն անգամ, երբ թշնամին սուր է բարձրացրել, հայ ժողովուրդը համախմբել է բոլոր ուժերը՝ իր ազատությունը, անկախությունը, պատիվը պաշտպանելու: Եվ այդ պահերին հայրենիքի պաշտպանության համար ցուցաբերած քաջությունը, անվեհերությունն ու հերոսությունը հանդիսացել են ազատաբաղձ ժողովրդի անբաժան հատկությունը: Այդպիսին է եղել մեր ժողովրդի պատմությունը»:

Ուսումնարանի աշխարհագրության ուսուցիչ, վաստակաշատ մանկավարժ Թեմուր Ամիրջանյանն էլ իր հուշերում գրում է, որ ուսուցման ընթացքում հատուկ ուշադրություն դարձվեց գործնական այնպիսի ունակությունների զարգացմանը, որոնք ռազմական նշանակություն ունեին և զուգակցվում էին Հայրենական պատերազմի իրադարձությունների հետ: Մանկավարժական ուսումնարանում ռազմական գործի ուսուցանումը տարվում էր բարձր մակարդակով, զինղեկ և դասատուներ էին աշխատում ճակատային փորձ ունեցող սպաներ,

որոնք վիրավորվելու պատճառով գորացրվել էին:

Ուսումնարանի 1946թ. շրջանավարտ, 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ Էմմա Վերդյանը իր հուշերում պատմում է, որ պատերազմի տարիներին ուսումնարանում ռազմական ուսուցումը բարձր էին միջերի վրա է դրվում: Կազմակերպվում էին 15-օրյա ռազմական ճամբարային պարապմունքներ, մասնակիցներից շատերը, ռազմական անհրաժեշտ գիտելիքներով զինված, հայրենասիրական բարձր գիտակցությամբ մեկնեցին ռազմաճակատ՝ համալրելով մեր բանակի շարքերը:

Մանկավարժական ուսումնարանում հետաքրքիր ու նպատակալաց էին կազմակերպվում առարկայական, թատերական ինքնագործ խմբակները, արտադասարանական ու արտադպրոցական միջոցառումները:

Կոլեկտիվը հայրենամեծ գործ կատարեց ռազմաճակատին օգնություն ցույց տալու ուղղությամբ: Նշենք բազմաթիվ միջոցառումներից մի քանիսը:

Ուսուցիչներն ու ուսանողները մեծ խանդավառությամբ մասնակցում էին Հայրենիքի պաշտպանության ֆոնդերի ուժեղացմանը և նախաձեռնություն ցուցաբերելով՝ հանդես էին գալիս մետաղի շարքում, այնումիջև ամաններ, խառնոթ դրամներ հավաքելու կոչով: Ռազմաճակատում կռվող մարտիկներին ուղարկում էին նվերներ, ծանրոցներ, տաք հագուստ, գուլպաներ, մրգեղեն: Նյութական օգնություն էին կազմակերպում ճակատայինների ծնողներին ու երեխաներին համար: Դրանական միջոցներով օժանդակեցին «Սասունցի Դավիթ» տանկային շարասյանը, որի համար կրթօջախի կոլեկտիվը արժանացավ Պաշտպանության գերագույն խորհրդի բարձր գնահատականին հատուկ նամակով:

Պատերազմական ծանր իրավիճակում հմուտ տնօրեն Արսեն Խաչատրյանի նախաձեռնությամբ 3 հեկտար տարածությամբ ստեղծած հողամասից ստացվող ամբողջ բերքն օգտագործվում էր ուսումնարանի ուսուցիչների և ուսանողների, ճակատայինների ընտանիքների սննդի գործը կազմակերպելու համար:

Կոլեկտիվի անդամները սերտ կապ ունեին ճակատայինների, հոսպիտալներում բուժվող մարտիկների հետ՝ վերջիններիս ցուցաբերելով շեֆական օգնություն: Վերջապես Հայրենական մեծ պատերազմի 1418 մղձավանջային օրերին հաջորդեց Մեծ Հայրենականի հաղթանակի լուսաբացը, որը ցնծությամբ ողջունեց խորհրդային բազմազգ ժողովուրդը, այդ թվում և՛ Շուշիի մանկավարժականի կոլեկտիվը:

Ահա թե ինչ է գրում 1946թ. շրջանավարտ Աննա Թովմասյանը.

«Ամռոտանալի է 1945թ. մայիսի 9-ը: Դեռ լույսը չբացված՝ հնչեց երկար գանգը: Սարսափած հավաքվեցինք: Ընկեր Խաչատրյանը բարձր տրամադրությամբ հայտարարեց. «Սիրելի ուսուցիչներ, ուսանողներ, պատերազմն ավարտվել է, այսուհետ դուք կաշխատեք և կսովորեք»: Այդ օրվա տոնակալն միջոցառմանը հարգարժան տնօրենն ասաց.

«Աչքներդ լույս, բարեկամներ ծանոթ և անծանոթ, բացվել է մեր բախտին մի նոր առավոտ, Այսօր բարի նոր հաղթության

Ու խաղաղության լուր է բերել...»:

Այս տարի մենք նշում ենք Մեծ հաղթանակի 75-ամյակը և երախտանքով հիշում ռազմաճակատ մեկնածներին: Հազարավոր արցախցիների շարքում իրենց ակտիվ մասնակցությունն են ունեցել Շուշիի մանկավարժական ուսումնարանի շրջանավարտները, հայրենասեր ուսուցիչները, ուսանողները: Շարք Մուսախանյան, Վահան Հարությունյան, Թեմուր Ամիրջանյան, Սիկոյա Երեմյան, Հովսեփ Բաղդուց, Չերքեզ Դավթյան, Բոգդան Ջանյան, Մելքում Մելքունյան, Բախշի Սիմոնյան, Մուշեղ Բալայան, Միսարոս Գրիգորյան, Արամ Մարտիրոսյան, Սերգեյ Շաքարյան, Սերգեյ Խաչատրյան, Եսայ Եսայան, Արտաշես Պողոսյան, Ռաֆիկ Մովսիսյան, Գաբրիել Գաբրիելյան, Վարդան Բալայան, Հովհաննես Ենկյան, Մելքում Աղաջանյան, Վաղինակ Բաղդյան, Ջալալ Աղաբեկյան և շատ-շատեր:

«Շուշիի մանկավարժական ուսումնարանը Մեծ Հայրենականում» աշխատանքը 2006թ. կատարել է նույն կրթօջախի 1956թ. շրջանավարտ, 1962 թվականից մինչև 2010 թվականը նախ՝ դասախոս, ապա տնօրեն աշխատած, կոլեկտիվի նվիրյալ, ԼՂՀ վաստակավոր մանկավարժ, Շուշիի պատվավոր քաղաքացի Ալբերտ Արսենի Խաչատրյանը:

Այս տարի, երբ նշում ենք Մեծ հաղթանակի 75-ամյակը, նպատակային համարեցի ներկայացնել նաև երջանակահիշատակ մանկավարժի հուշերը:

Փառք ու պատիվ կրթօջախի կոլեկտիվին, նրա շրջանավարտներին, ուսանողներին: Խոնարհում ու պատակառանք՝ բոլոր զինվորներին, ովքեր կռվել, մարտնչել են Մեծ հաղթանակի համար: Գլուխ ենք խոնարհում նրանց հիշատակի առաջ: Թող լույս իջնի նրանց շիրիմներին:

Հավե՛րժ փառք ու հանգստություն նրանց հոգիներին, իսկ ապրողներին կոչենք՝ հիշենք նրանց այսօր, վաղը և ընդմիշտ:

Լարիսա ՂԱԶԱՐՅԱՆ
ԼՂՀ վաստակավոր մանկավարժ
Ք. Շուշի

ԱՆՍՈՒՑ ԱՆՈՒՆԵՐ

ԵՐԿՐՈՒ ԱԶՆԵՔՅԻ՝ ԲԵՈՒԽՆԻ ՃԱՆԱՊԱՐԿԻՆ

Պատմության ու ժամանակների վրա անհատի ներգործության վերաբերյալ կարծիքներն ու տեսակետները մեր օրերում ևս հակասական են, շարունակաբար բանավեճեր են ընթանում այսպիսի սուր ու պրոբլեմատիկ հարցի կապակցությամբ՝ արդյոք անհատը կարող է շրջել պատմության անիվը, նոր իմպուլս հաղորդել ժամանակների խելահեղ ընթացքին: Այս հարցի քննարկումը ես չեմ դիտարկի բացառապես սուբյեկտիվ-իդեալիստական, անարխիստական գաղափարախոսության լույսի ներքո, «անհատի պաշտամունքի» սահմանափակ տրամաբանությամբ, երբ այդ պաշտամունքի հասցեատիրոջ, «դավիենկրի» ետևի ֆոնում ստվերվում են մնացածները: Իսկ այդ մնացածների շարքում բազում անուններ կան՝ արժանի մեծարումի, արժևորումի ու հիշատակման: Խոսքն այս պարագայում անհատների հոգևոր ու բարոյական բացառիկ սխրամքների որակական ամբողջության, հանրագումարի մասին է, որը ստեղծում է այն անկասելի հարվածային ուժը, որի դրոշմը մարդկային հիշողությունը պատմության ու ժամանակների բոլոր փուլերում անկարող է չլինել իր վրա...



գյուղում (այժմ՝ Ասկերանի շրջան): 1937թ. ավարտել է տեղի դպրոցի 6-րդ դասարանը: Մինչև զորակոչվելը աշխատել է կոլտնտեսությունում:

1940թ. սեպտեմբերին զորակոչվել է Կարմիր բանակ, իսկ հաջորդ տարվանից արդեն ռազմաճակատում էր (հիմնականում՝ Հյուսիս-արևմտյան): Մարտական առաջին մկրտությունը ստացել է Պորխովո քաղաքի մատուցներում: Մասնակցել է Լենինգրադի պաշտպանությանը, 1943թ. համալրել ՀամԿ(Բ)Կ (ԽՍՀՄ) շարքերը: 1943թ. նոյեմբերի 7-ի գիշերը սակրավորների ստորաբաժանում հրամանատար սերժանտ Իսրայելյանը, հետախուզում իրականացնելով Սոբոլևո բնակավայրի մոտ (Ստարայա Ռուսսա քաղաքից 26 կմ հվ.), զինակիցների խմբով ներխուժեց հակառակորդի խրամատ: Սակրավորներ Իսրայելյանն ու Սկրոխովսկոյը պայթեցրին հակառակորդի 2 բլինդառ, ոչնչացրին 50 միլիմետրանոց ակամանետ և վնասազերծեցին 15 հիտլերական զինծառայողների: Առաջադրանքի օրինակելի կատարման համար 1943թ. նոյեմբերի 17-ի հրամանագրով Գ. Իսրայելյանը պարգևատրվեց Փառքի 3-րդ աստիճանի շքանշանով: Այսպիսով, նա այս պարգևը ստացած առաջին խորհրդային զինծառայողն էր: Այնուհետև Գ. Իսրայելյանը աչքի ընկավ նաև Վելիկայա գետի ծախակողմյան ափին գտնվող Գլիժինո բնակավայրում մղված ռազմական գործողություններում, ինչի արդյունքում անվերջոր հիմնվորակաճ 1944թ. ապրիլի 27-ի հրամանագրով պարգևատրվեց Փառքի 2-րդ աստիճանի շքանշանով: Անվախ սզնեքցի աչքի ընկավ նաև Մերձբալթիկայի ազատագրման համար մղված մարտերում՝ վնասազերծելով 3 ակամապատված դաշտ, հանելով ավելի քան 170 հակատանկային ու հակահետևակային ակամաներ: 1944թ. ապրիլի 2-ին նրա խումբը Ստալիճանի գյուղի մոտ կարճ ժամանակում վերականգնեց Ներետինա գետի վրա կառուցված կամուրջը, որն ավերվել էր գերմանացիների կողմից մարտավարական նկատառումներով: Սա հնարավորություն տվեց սակրավորներին Իսրայելյանի գլխավորությամբ ներխուժել հակառակորդի թիկունքը և Ռիմչաս գյուղի մոտ (Լատվիա) դարանակալել նրան՝ ոչնչացնելով 10 հիտլերականների ու գերի վերցնելով 16-ին: Լատվիայի ԽՍՀ-ի ազատագրության համար մղված մարտերում ցուցաբերած արիության, նվիրվածության ու անթերի ծառայության համար ԽՍՀՄ ԳԽ նախագահության 1945թ. մարտի 24-ի հրամանագրով սերժանտ Իսրայելյանը պարգևատրվեց նաև Փառքի 1-ին աստիճանի շքանշանով՝ դառնալով եռաստիճանի շքանշանի լրիվ սուպետ: Փաստացիորեն սա հավասարազոր էր ԽՍՀՄ հերոսի կոչմանն ու հեղինակությանը: Հարկ է նշել, որ Փառքի բոլոր 3 աստիճանների շքանշանակիր դար-

ձավ 27 հայրդի, և սզնեքցի Գեորգի Իսրայելյանն այդ 27-ից մեկն է:

Իսրայելյանը պարգևատրվել է նաև այլ մեդալներով ու շքանշաններով՝ «Մարտական վաստակի համար» մեդալով, Կարմիր աստղի և Կարմիր դրոշի շքանշաններով, Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի մեդալով:

1945թ. ապրիլին 182-րդ հրաձգային դիվիզիան, որի կազմում էր նաև Իսրայելյանը, դուրս եկավ Բալթիկ ծովի ափ, որտեղ էլ ավարտեց իր մարտական ուղին: Մի քանի օր անց դիվիզիան տեղափոխվեց Գրինյայի շրջան, որտեղ էլ նշեց Հաղթանակի օրը:

Մինչև 1946թ. Գ. Իսրայելյանը գտնվում էր զինվորական ծառայության մեջ: Զորացրվելուց հետո նրա կյանքում սկսվեց դեգերումների շրջան. մինչև 1952թ. ապրիլից Բաբլովո, այնուհետև տեղափոխվեց թուրքմենական Յուլտեն քաղաք, իսկ 1965թ. արդեն վերջնականապես հաստատվեց Ռեզար քաղաքում (1978թ.՝ Տուրսունգադե, Տաջիկստանի ԽՍՀ): Այստեղ աշխատասեր Իսրայելյանը ժամանակի ընթացքում հասավ արտադրամասի ղեկավարի պաշտոնի և խորհրդային հնգամյա պլանի 9-րդ հնգամյակի իր կատարողականը 3 տարվա ընթացքում իրականացնելու համար պարգևատրվեց հանրահայտ Drummers-ի շարժման («ցնցող աշխատանք» արտահայտությունից) «Ударник пятилетки» կրծքանշանով: Գեորգի Իսրայելյանը մահացել է 1989թ. հունվարի 31-ին: Թաղված է Տուրսունգադե քաղաքում:

«Նա սակրավոր է՝ աստծո նախախնամությամբ», այսպես էին բնութագրում Իսրայելյանին 140-րդ հրաձգային գնդի սպաները: Նա հորից ժառանգել էր դերձակի մասնագիտությունը և, շնորհիվ ճկուն մատների, հաշված վայրկյանների ընթացքում ուսունմասիրում էր տղաների կողմից իր մոտ բերված ակամաները, որոնք օգտագործվել էին հակառակորդի կողմից, և միանգամից կռահում ակամանի կառուցվածքն ու աշխատանքի մեխանիզմը: Հատկանշական է, որ պատերազմի 2,5 տարի և ավելի ժամանակահատվածում այն տարածքներում, որոնց ակամազերծման աշխատանքներն իրականացրել է Գ. Իսրայելյանը, սովետական և ոչ մի զինվոր ակամանի պայթյունից չի զոհվել:

Ահա այսպիսին էր կրտսեր հրամանատարը, որը հույս ու հավատ էր ներշնչում մոտալուտ հաղթանակի նկատմամբ, ամեն քայլափոխի ոգեշնչում զինվորներին և դա՝ սեփական օրինակով: Անչափ հետաքրքրական է, որ Կարմիր բանակի գլխավոր քաղաքական ղեկավարության կողմից հայերեն և ռուսերեն լույս ընծայվեց Գեորգի Իսրայելյանի մասին պատմող մի գեղարվեստական ֆելիետոն, որում գրված էր. «Իսրայելյանը Երկրորդ համաշխարհային պատերազմի առաջին իսկ օրերից կռվում է ԽՍՀՄ ժողովրդի թշնամու դեմ: Իսրայելյանը գերմանացիներին, ինչպես՝ սերժանտ Իսրայելյանը»:

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՍԵՐԳԵՅ ԱՐԿԱՂԻ: Հայ խորհրդային պետական գործիչ, ԽՍՀՄ ներքին գործերի նախարար (1961-1968), գեներալ-մայոր: Ծնվել է 1921թ. Ներքին Սզնեք գյուղում: Մ ա ն կ ու թ յ ա ն օրերին ընտանիքով տեղափոխվել է Գրոզնի, որտեղ ավարտել է Ա ս ո թ ա խ ա ն ի ռազմական վար-



ժարանը լեյտենանտի կոչումով: 1941թ. 162-րդ հրաձգային դիվիզիայի 501-րդ գնդացրային գումարտակի կազմում Ս. Արզումանյանը Հյուսիս-արևմտյան ռազմաճակատում մասնակցել է Վիտեբսկ քաղաքի հա-

մար մղվող մարտերին: Մասնակցել է Վելիկիե Լուկի քաղաքի պաշտպանությանը: 1941թ. նոյեմբերին Արզումանյանը նշանակվում է 298-րդ հրաձգային գնդի (186-րդ դիվիզիայի կազմում) շտաբի պետի տեղակալ: 1942թ. ստանում է կապիտանի կոչում և նշանակվում գնդի հրամանատարի տեղակալ: Վիլյա քաղաքի համար տեղի ունեցած մարտերում փոխարինել է գնդի զոհված հրամանատարին, վիրավորվել՝ ուղարկվելով բուժման, որից հետո՝ 1943թ. Սերգեյ Արզումանյանին տրվում է մայրի կոչում: Ղեկավարությունը ուղարկում է նրան Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիա, որը Սզնեքի ու հայ ժողովրդի արժանի զավակն ավարտում է փոխգնդապետի կոչումով:

Պարգևատրվել է Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշանով, «Մարտական վաստակի համար», «Անթերի ծառայության համար» 1-ին աստիճանի մեդալներով, Կարմիր աստղի 2 շքանշաններով ու այլ մեդալներով: 1960-ական թթ. սկզբին Ս. Արզումանյանն ավարտում է նաև ԽՍՀՄ Ջինված ուժերի Գլխավոր շտաբի՝ մարշալ Կ.Ե.Վորոշիլովի անվան ռազմական ակադեմիան և գնդապետի կոչումով նշանակվում մոտոհրաձգային ուժերի հրամանատարի տեղակալի պաշտոնում: 1961-1968թթ. զբաղեցրել է ՀԽՍՀ ներքին գործերի նախարարի պաշտոնը, իսկ 1962թ. ստացել գեներալ-մայորի կոչում: Քաջարի զինվորականը և հայրենյաց նվիրյալը մահացել է 1970թ.՝ ընդամենը 49 տարեկան հասակում: Թաղված է Երևանում:

Ես հպարտ եմ, որ փոքրիկ Սզնեքը Գեորգի ու Սերգեյ է ծնել: Հավերժ փառք...

Խոնարհվում եմ ձեր մեծության ու փառքի առջև, սզնեքցի՝ հերոսներ: Խոնարհվում եմ Մեծ Հայրենական ընկած 105 սզնեքցիների անմար հիշատակի առջև: 1945-ի մայիսյան հաղթանակը չէր կայանա, եթե այս տղաները չխառնեին իրենց բոսոր արյունը արյան այն գետերին, որոնք պատմության էջերում կարմիրով ու ոսկիով պիտի գրեին՝ ՀԱՂՈՒՆԱԿ...

Ահա ես ծաղիկս գզուշորեն խոնարհում եմ ձեր հուշարձանին՝ հանակվելով հերոսականի հիացումով և մեկ առ մեկ կարդալով իդիված հուշաքարի լուսե անունները՝ Առստամյան Բահատուր, Մուսայելյան Շափաղաթ, Հակոբջանյան Գրիշա, Թովմասյան Սուրեն, Փաշայան Մելիք, Սահակյան Սերգեյ, Մարտիրոսյան Եղիշե... Եղիշեն հորս հորեղբայրն է, պապիս միջնեկ եղբայրը: Աչքի լույսի պես եմ պահում նրա միակ լուսանկարը՝ որպես սուրբ մատուց: Հաճախ փորձում եմ կատարյալ լռություն որսալ՝ զգալու լուսանկարից ինձ նայող աչքերի ասելիքը: Եվ գիտե՞ք՝ ես այդ աչքերի սևին ու սպիտակին խառնված կարոտի գույնն եմ նշմարում: Այո, ես ամեն մահատակի աչքերում հստակ երանգներով կարողանում եմ տարանջատել այդ կարոտագույնը: Եվ կարևոր չէ, թե երբ եմ արվել այդ լուսանկարները՝ պատերազմից առաջ կամ պատերազմի ընթացքում, միևնույն է, հայրենի օջախի, մոր քնքուշ ձայնի, հայրենի հիշատակների կարոտի այդ վճիտ գույնը թեև ու թափանցել է լուսանկարի մեջ, խառնվել Հերոսի աչքի բիբին, որ ամեն անգամ այդ աչքերին նայելիս գիտակցեցեք, որ նրանց չապրած կյանքը պարտավոր ենք ապրել մենք և՛ արժանապատիվ ապրել, ազատ ու անկախ ապրել ու նաև անգիշում պայքար մղել, երբ կփորձեն բռնաճալ այդ ազատության վրա, պատրաստ լինել անձնագոհության, սիրել մայր հողն ու հայրենիքը վեր դասել բոլոր սրբություններից...

Կարեն ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ԱրՊՅ Իրավագիտության բաժնի
ուսանող, Սզնեքի միջև. դպրոցի նախկին
շրջանավարտ

ՈՉ ՈՐ ԶԻ ՍՈՈԱՅՎԵԼ, ՈՉԻՆՉ ԶԻ ՍՈՈԱՅՎԵԼ

ՄԱՍՈՒՆՔՆԵՐԸ ՊԱՏՍՈՒՄ ԵՆ, ՓԱՍՏԵՐԸ՝ ԿԿԱՅՈՒՄ, ՀԻՇԱՏԱԿՆԵՐԸ՝ ՀԱՎԵՐԺԱՑՎՈՒՄ... (ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱԿԱՆԻ ԱՆՀԱՅՏ ԿՈՐԱԾ ԶԻՆՎՈՐԻ ՄԱՍՈՒՆՔՆԵՐԸ ԱՄՓՈԹՎԵՅԻՆ ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂՈՒՄ)

Մեծ Հայրենական հիշատակները մատ- յաններ են կազմում և չեն խամրում, այլ կայծկլուում են և ասուպներ դառնում... Դրանք մեծ վիշտ են՝ անթելված ժողովրդի սրտում: Դեռ հայտնաբերվում են արահետներ, որոն- ցով քայլել ու սխրանքի են մղվել հազարավոր մարտիկներ, հայրերի: Նրանցից ամեն մե- կի ճակատագիրը մի ուրույն պատմություն է, մի կյանքի արտացոլում: Ի՞նչ նեղություններով են անցել, ի՞նչ հերոսացման հասել...

Պատմությունների առանցքում են անձնու- րաց հերոսությունը, հայրենիքին անմացորդ նվիրվելու պատրաստակամությունը: Այս պատմությունը երկար ճանապարհ է կտրել՝ հայրենի Բերդաձորից ձգվելով դեպի Անդրկովկաս ու հասնելով մինչև Կերչ ու Դրիմ և վերջնական հանգրվան գտել արցախյան հո- ղում:

Երվանդ Սափարիի Հարությունյանը, ծն- ված լինելով 1912թ. Շուշիի շրջանի Գարաշ- լաղի (Բերդաձոր) Մեծ շեն գյուղում, հազար թելերով կապված էր հայրենի գյուղին: Այն ժա- մանակվա Բաքուն հայաշատ քաղաքներից էր, որտեղ տեղափոխվել էր երվանդ Հարություն- յանը՝ բարձրագույն կրթություն ստանալու նպատակով, որից հետո աշխատում էր որպես ռեկորդ՝ միաժամանակ օգնելով գյուղում մնա- ցած բազմադաս ընտանիքին: Ամուսնացել է, ունեցել մեկ դուստր (կինը՝ Հարությունովա Լյալյա, դուստրը՝ Ալլա երվանդովնա):

Երբ սկսվել է Հայրենական մեծ պատերազ- մը, երեսնամյա երվանդը առաջին զինակցիկ- ներից էր, որ անձնուրաց մարտնչեց՝ մնալով հավերժ երիտասարդ՝ անհայտ ճակատա- գրով...

Ընդդեմ համաշխարհային ոճրի՝ ֆաշիզմի երվանդը մարտնչել է թամանյան դիվիզիա- յում և անցելով Կերչ, Դրիմ: Նրա գրած և գյուղ ուղարկած նամակների մասին տեղեկություն- ներ է հաղորդում եղբայրը՝ այժմ ինժեներական Վահան Հարությունյանը: Ասում է, որ զինվոր եղբոր նամակները տոգորված էին լավատե- սությամբ, այն ժամանակվա հայրենասիրա- կան բարձր ոգով: «Մեր գործն արդար է: Թշնա- մին կջախջախվի: Հաղթանակը մերն է լինե- լու»: Բայց 42-ի գարնանը կապն ընդհատվում է, իսկ մոր՝ Սոֆյա Հարությունյանի սիրտը տագնապում է... Նույն ժամանակաշրջանում իր երկրորդ որդին՝ Աշոտը, մարտնչում էր Բե- լոռուսական ռազմաճակատում, որի հետ կա- պը նույնպես կտրվեց...

Մինչև կյանքի վերջը տառապալ մայրը

սպասում էր որդիների վերադարձին: Գնում էր կանգնում գյուղի ծայրին և երկա՛ր-երկար նա- յուն հեռուն, որտեղից երևում են բոլոր ճանա- պարհները... Եվ այդպես խուճապած աչքերով ու տրտում հոգով նա հրաժեշտ տվեց աշխար- հին:

Երվանդ և Աշոտ Հարությունյանների հիշա- տակը սրբորեն պահվեց ողջ գերդաստանում թե՛ եղբայրների՝ Վահանի ու Բորիսի, թե՛ քույ- րերի՝ Մարուսյայի, Լիզայի, Արևի ընտանեկան հարկերում: Ավագ քրոջ՝ Մարուսյայենց պա- տին կախված գորգին փակցված էին գերդաս- տանի երևելիների մեծացրած նկարները, կենտրոնում անհայտ ճակատագրով զինվոր եղբայրների նկարներն էին՝ մեկ շրջանակի մեջ առնված: Ու անընդհատ սրտամորմոք պատ- մությունները կրկնվում էին՝ կորզելով կեղեքող հառաչանքներ: Վիշտը սրտում՝ կյանքից հե- ռացան ավագ քույր Մարուսյան, հետո Լիզան:

Տարիներն անցնում էին, բայց գերդաստա- նի ապրողների հիշողությունից չի ջնջվում ան- հայտ ճակատագրով քողարկված եղբայրների հիշատակը:

Դրիմի՝ Ռուսաստանի հետ վերամիավորու- մից հետո ընդլայնվեցին շփումների հնարավո- րությունները: ՌԴ-ում և արտերկրում առաջին գործող որոնողական կազմակերպությունները չեն դադարեցրել իրենց աշխատանքները. նրանք մաքրում են տարածքներն ականներից, փնտրում անհայտ կորած մարտիկների աճ- յունները:

Տեղեկությունները հաղորդում են, որ զին- վորներն իրենց հետ ունեցել են մահվան պար- կուճ կամ մեդալիոն (смертная казнь или медальон). դա սև պլաստմասե փոքրիկ ու նեղ անոթ է, որի մեջ պահվում են զինվորի տվյալ- ները: Հատուկ բլանկի մեջ զինվորը լրացնում է իր տվյալները, գցում պարկուճը և կարում զրպանում, որ չկորցրե: Եթե փակիչը լավ էր լի- նում փակված, տվյալները լավ էին պահպան- վում, իսկ եթե ոչ, մահվան դեպքում փոխում էր հողում: Բայց բոլորը չէին պահում պարկուճնե- րը՝ ենթադրելով, որ այն մահ է խորհրդանշում, այլ գործածում էին ծխամորձի տեղ:

Վերջին մի քանի ամիսների ընթացքում Դրիմի անվտանգության ֆեդերալ ծառայու- թյան աշխատակիցները որոնողական աշխա- տանքների արդյունքում Թեոդոսիա քաղաքի մատույցներում գտնում են հողածածկ խրա- մով՝ երեսունմեկ զինվորների մատուցներով, որոնցից յոթինը գտնվում էր բլինդաժում: Որո- նումներից պարզվում է, որ միայն մեկ զինվոր

ունի մահվան պարկուճ, որը պատկանում է Եր- վանդ Հարությունյանին: Ուժեղ ռմբակոծու- թյան ժամանակ զոհվել են բոլոր զինվորները, հողն էլ լցվել է նրանց վրա: Պետք է հասնեին մոտակա բարձունքը, որը գտնվում էր հարյուր մետրի վրա: Ողջ վաշտից կենդանի զինվոր չի մնացել, որ տեղեկացներ խրամատում գոհ- ված զինվորների մասին: Ռմբակոծությունից խրամատը լցված հողը յոթանասուներեք տարի անհայտ է պահել զինվորների աճյուններն ու հիշատակները: Այդ տեղանքի՝ Կերչ-դրիմյան անհավասար, անողոք ու թեժ մարտերում զոհ- վել է հարյուր հիսուն հազար զինվոր: Ֆաշիստներն ուզում էին Դրիմը հենակետ դարձնել Կովկասի վրա հարձակման համար:

Կազմակերպությունը սկսել է փնտրել հա- րազատ-բարեկամներին:

- Կազմակերպությունն ունի կայքէջ, որտեղ գրվում է, թե ով է գտնվել,- պատմում է Երվան- դի եղբորորդին՝ մոսկվաբնակ Մանվել Հարու- թյունյանը:- Այդ կայքում կարդացի, որ փնտ- րում են զոհվածի հարազատներին Բաքվում, որտեղ գրանցված էր Երվանդը: Կարդացի և զանգեցի որոնողական ջոկատի հրամանա- տարին: Պատասխանեցին, որ փնտրում են հարազատներին:

Ծառայության աշխատակիցների կանչով դեկտեմբերի չորսին արդեն Թեոդոսիայում էի, որտեղ հարց ու պատասխաններով ճշտումներ են կատարել համոզվելու՝ տվյալները ճի՞շտ են, թե ոչ: Իրար համապատասխանել են ասածն ու փաստերը: Հարցրել են՝ մատուցնե- րն ամփոփեն տեղո՞ւմ, թե՛ տեղափոխեն հայ- րենի հող: Պատասխանել են, որ այսքան տա- րի մոր աչքը որդու ճանապարհին է եղել... Մանվելը որոշեց, որ հորեղբոր մատուցները փոխադրեն հայրենի հող և ամփոփեն մոր ծո- ցում:

Մեկ այլ խրամատում գտել էին ևս մի հայր- դու մատուցներ: Դրիմի մայրաքաղաք Սիմֆե- րոպոլում կայացել է հիշատակի հրապարա- կային արարողություն նախագահի մասնակ- ցությամբ: Թեոդոսիայի մշակույթի պալատում կազմակերպվել է հիշատակի հանդիպում: Մանվելը դիմել է ՌԴ պաշտպանության նախա- րարությանը, որտեղ դեմ չզգնացին այդ որոշ- մանը: Լուրը հայտնեց Ստեփանակերտի բարե- կամներին: Տեղում հարցով սկսեցին զբաղվել ավագ հարազատները, նրանց զավակները՝ Բորիսը, Ծովինարը, Ժուլյան, ԱՄՆ-ից՝ Յուրին, շատերը... Բոլոր նախապատրաստական աշ- խատանքները կատարված էին:

ՀԻՇԱՏԱԿՆԵՐԸ ՀԱՎԵՐԺԱՑՎՈՒՄ ԵՆ



Պատերազմ... Ահ ու սարսափ, մահաբեր ժանտախտ: Այն կործա- նեց ու ավերեց հազարավոր քաղաք- ներ, մոխրացրեց գյուղեր: Ոչ միայն մարեց օջախների ծովան ու արցունք խառնեց արջուրի կարկաչին, այլ և ներխուժեց մարդկանց ներաշխար- հը, խլեց հազարավոր երիտասարդ- ների կյանքեր: Շատերը ի՞նչ հույ- գեր, երազանքներ, նվիրումներ ու սխրանքներ թողին անավարտ: Թո- դեցին այրիացած կանայք, չհարս- մացած աղջիկներ, զավակներից սպասող ծնողներ:

Հայ ժողովուրդը նույնպես գերծ չմնաց այս տառապանքներից՝ 1418 օր տանելով զրկանքներ, զինվորա- գրվեց 1941-ի ահեղաշունչ պատե- րազմին՝ փրկելու հայրենիքը ոճ-

րագործ թշնամուց: Անհնար է որևէ բանի հետ համեմատել, որևէ չափ ու կշռի տակ դնել այն կորուստները, որ պատերազմը պատճառել է մեր ժո- ղովրդին: Բայց կորուստներից մեծա- գույնը սիրով, երազներով, ապագա- յի տենչերով լի այն բյուրավոր երի- տասարդ կյանքերն էին, որ մեկընդ- միշտ լռեցին պատերազմի դաժան օրերում: Քաղաքները վերականգն- վեցին, մոխիրներից հառնեցին նո- րաշեն ավաններ ու գյուղեր, մարդիկ ազնիվ աշխատանքով նյութական նորանոր բարիքներ ստեղծեցին, բայց կորուստներից մեծագույնը մնաց անհատույց...

Եվ այսօր 75 տարվա հեռավորու- թյունն իսկ անգոր է ամոքելու մի- լիոնավոր ծնողների, այրիների զա- վակների վերքերը, որոնք չեն սպիա- ցել, մխում են դեռ ու մորմոքում:

Ահա դրանցից մեկն էլ են եմ՝ 80- ամյա մանկավարժ: Կարոտի հուշեր ունեն հորս՝ Գալուստ և հո- րեղբորս՝ Լևոն Ղազարյանների մա- սին:

Երբ սկսվեց Հայրենական մեծ պատերազմը, խորհրդային բազմա- զգ ժողովուրդների շարքում էր հայ ժողովուրդը՝ Հայրենիքի պաշտպա- նությունն ու սրբությունը համարելով սուրբ գործ, մարտնչելով մինչև վերջ:

Մեծ Հայրենականում իր կյանքը հայրենի Ջավախքից հեռու, գիտակցաբար հայրենիքի փրկու-

րումով ու պատկառանքով ենք մա- նակցում ես, թոռներն ու ծոռները Մեծ հաղթանակին նվիրված համա- ժողովրդական տոնին:

Մեծ Հայրենականի 75-ամյա հաղ- թանակը միաձուլվել է հայ ժողովրդի բազմադարյա պատմությանը: Ավա- րայրից մինչև այսօր առանձնանում է մայիսը հաղթական իրադարձու- թյուններով: 20-րդ դարի ամենահիշ- արժան հաղթանակներից է Հայրե- նական մեծ պատերազմում ֆաշիս- տական Գերմանիայի դեմ տարած հաղթանակը, երբ մարտնչող հայ զինվորները կռվեցին մինչև վերջ, «Գիտակցված մահն անմահություն է» երդումը շուրթերին հասան Բեռ- լին, որտեղ հաղթանակի ոգով զորա- ցած՝ զիլ հնչեց զուռնան հայկական՝ «Քոչարի» պարը արիական: Բարձր ծածանվեց դրոշը հաղթական:

Մայիսի 9-ը մեր հերոս պապերի ու հայրերի տոնն է, նրանց հերոսաց- ման անգերազանցելի երազանքը հարատևության և լուսավոր ապա- գայի: Նրանք մինչև վերջ գիտակցե- ցին, որ հայրենիքի փրկությունը պայքարն է արյունաբեր ու եղեմա- գործ թշնամու դեմ: Ցասումով ու վրեժով զարկեցին չար ու բարբարոս թշնամուն և դարձան հավերժ հիշվող լույս-փարոս՝ տալով հերոսացման դասեր:

Մայիսի 9-ը համալրվել է Արցա- խի հիմնավոր մայրաքաղաքի՝ Շուշիի հաղթանակով և Արցախի

Դրիմի կառավարության և տեղի հայ հա- մայնքի ջանքերով երկու հայրորդների մա- տուցները տեղափոխվել են Երևան, և կա- տարվել հանդիսավոր արարողություն: Մա- տուցները երևանում հանձնել են Երվանդ Հա- րությունյանի եղբոր թոռանը՝ Ռադիկ Հարու- թյունյանին, որը դեկտեմբերի տասնութին ամենայն պատասխանատվությամբ մատուցե- րը Շուշիի վարչակազմի ղեկավար Վ. Կաս- յանի կողմից հատկացված փոխադրամիջոցով հասցրել է Շուշի, որտեղից էլ Ստեփանակերտ՝ պապի եղբոր՝ Բորիսի օջախ, որտեղից վերջին հանգրվան էին գտել գերդաստանի նախա- պետները. հայրը՝ Սափարին, մայրը՝ Սոֆյան:

Երվանդի ծննդավայր Բերդաձորի մոտով անցնելիս եղբոր թոռը պահել է տվել մեքենան ու հայտնել.

- Ահա՛ քո ծննդավայրը, տառապալ ու նա- հատակ Երվանդ:

Հաջորդ օրը ներկայացուցչական խումբը Նոյեմբերյանի շրջանի Կոթի գյուղում հողին հանձնեց հայրորդի Հովակի Բաբլումյանին:

Դեկտեմբերի քսանին ներկայացուցչական խումբը Արմեն Մարդոյանի գլխավորությամբ, հարազատների ու բարեկամների հոծ բանակի ուղեկցությամբ զինվորական արարողա- կարգով մոտեցավ գերեզմանին: Խոնարիվե- ցին հայոց դրոշները, հնչեցին հիշատակի խոսքեր, և խորհրդային բանակի սպա, կրտսեր հրամանատար մայր Երվանդ Հարություն- յանն ամփոփեց հայրենի հողում՝ իր վշտա- հար մոր ծոցում...

Մարդկային ճակատագրերը տարբեր են լի- նում: Գուցե չպետք է վերջակետել, և այս պատմությունը գտնի իր շարունակությունը, քանզի ութսունականներին Ե. Հարությունյա- նի կինը եկել և բնակվում էր Ստեփանակեր- տում: Պատերազմական թոհուրեհում ամեն ինչ իրար է խառնվում: Որտեղ է նա՞ ոչ ոք չգի- տի: Ասում են՝ դուստրը չկա, իսկ գուցե մի օր թոռները գտնեն պապի հետքերը և զան խո- նարիվելու Մեծ Հայրենականի զինվորի շիր- մին:


Այս պատմությունը միլիոնավորներից մեկի կյանքի վավերացումն է, որը փաստում է, որ ոչ ոք չի մոռացվել, ոչինչ չի մոռացվել: Իսկ հիշա- տակները սերունդներին մղում են մարտնչելու և հերոսանալու կռվում կամ խաղաղ պայման- ներում:

Վարդիթեր ՀԱԿՈՒՅԱՆ

Լարիսա ՂԱԶԱՐՅԱՆ ք. Շուշի

ՆԿԻՐՅԱԼՆԵՐ

ԿԻՍՎԱՆ ԸԱՅՈ



«Ալավան շատ հեռատես ու վճռական բնավորություն ուներ: Համոզված էր, որ այս կռիվը արցախցիների հաղթական կռիվն է դառնալու, ու ոչինչ չէր խնայում,- այսպես է սկսում իր խոսքը ամուսնու մասին նրա այրին՝ Անայան: Շատ քաջ ու անվախ զինվոր էր, վախկոտներին բնավ չէր սիրում: Մի օր էլ Ստեփանակերտից բռնցիկներ էր բերում գյուղ, երբ հոջալուում օժոնականները բռնեցին նրան: Դպրոցի տնօրեն Ջավեն Բեգլարյանի և կրթօջախում տեղակայված ռուսական բանակի բարձրաստիճան զինվորականի ջանքերով Ալավան տուն է վերադառնում, և մայրը՝ Ժենյան, մինուճար որդու ոտքերի տակ աքլոր է մորթում ու պատվում իսուրերին, որ տղան ազատվել է փորձանքից»:

Ալավա Գրիգորի Սելբունյան:

Ծնվել է 1956 թվականի հոկտեմբերի 9-ին Ասկերանի շրջանի Խնապատ գյուղում: Հաճախել է գյուղի միջնակարգ դպրոցը, որն ավարտել է 1973 թ.: 1974 թ. նոյեմբերին զորակոչվել է խորհրդային բանակ, ծառայել Ավերդուլվակ քաղաքում, զորացրվել է 1976-ին: Վերադառնալուց հետո աշխատել է գյուղի կոլտնտեսությունում՝ որպես փականագործ: Աշխատանքին զուգահեռ հեռակայել է Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումի մեխանիզացիայի բաժնում և ավարտել 1981 թվականին:

Ալավան կանգնած է եղել Շարժման ակունքներում: Երբ մարդիկ դեռևս շուկայով էին արտահայտվում դարաբաղյան խնդրի շուրջ, նա, որ արդեն դպրոցում էր աշխատում (աշխատանքի ուսուցիչ էր), արհեստանոցը զինանոց էր դարձրել: Համոզված էր՝ զենքն անպայման պետք է գալու. չէ՞ որ լավ գիտեր մեր «հարևանների» ազգային բնույթը: Դաստիարակվել էր նաև մեծ Պատմաիր կարևորագույն գաղափարով. «Քաջերի սահմանը զենքն է յուրյանց»:

Դեռևս Քարազխի դիրքերում էր (նա եղել է նոր-նոր ձևավորվող ջոկատի առաջին հրամանատարը), որ կանխագույն էր մտախոսում արհավիրքները, որոնք էլ չուշացան:

Շուտով գյուղի վրա արկերի կարկուտ տեղաց: Վտանգն ահագնանում էր, մահն էլ՝ անխուսափելի դառնում: Ալավան հոգում մի ան-

խախտ ուխտ ուներ. «Ուտիլը չպետք է ոտք դնի մեր սուրբ հողին ու պղծի այն»: Ու հավատարիմ մնաց իր ուխտին: Որպես մարտիկ նա զենքը շատ էր սիրում: Իրենց ավտոտնակը իսկական զինանոց էր դարձրել, ուր հաճախ էին այցելում Վիտալի Բալասանյանը, Սլավիկ Առուշանյանը և Ալբերտ Ավանեսյանը: Նրանք ամեն անգամ զարմանում էին ազատատենչ մարտիկի հմուտ ու հրաշագործ մտահղացումների վրա: Կինը փորձում է մանրամասնել Սլավայի մարդկային արժանիքները՝ անընդհատ դեպքեր հիշելով նրա կյանքից. «Շատ ընկերասեր էր, հոգատար և ուշադիր բոլորի հանդեպ: Մի օր շտապ ներս մտավ՝ հետևից բերելով իր ջոկատի տղաներին: Բոլորին մեկ-մեկ նստեցրեց աթոռին, սափրեց գլուխները: Դե, պատերազմ էր, վարսավիրանոց չկար, իսկ ինքը ելքը գտնում էր:

Կինը, մայրն ու երեխաները առանձին սրբություն էին նրա համար: Շատ էր երազում երկու որդիների՝ Նվերին և Երիկին, մեծացած տեսնել: Իսկ իմ նկատմամբ շատ նրբանկատ էր, երբեք չէր թողնի որևէ ծանր գործ անել: Հիշում եմ. մի օր հաց էի հունցել և պետք է տանել հարևան Գոհարենց թոնիրը: Երբ խոնջան ուսիս դրեցի, որ գնամ, նա նայեց ինձ, ամխոս մոտեցավ, վերցրեց խոնջան ու տարավ թոնրատուն՝ շարժելով բոլոր հարևանների զարմանքն ու հիացմունքը: Մի

դեպք, սակայն, խոր նստվածք է տվել հոգուս մեջ: Չուզեցի մեկ օր առաջ էր: Գիշերը երազում մայրս մի հաց է մեկնում ինձ, բայց նկատում եմ, որ հացը կիսված է... Արթնանում եմ շատ մտահոգ ու անհանգիստ: Առավոտյան երբ փորձում եմ թերմոսը վերցնել, ձեռքիցս ընկնում է ու փշրվում: Մտածում եմ, գուցե սա էր խորհրդանշուն կիսված հացը, ու մի քիչ խաղաղվում եմ:

Օրը կիսվում էր. ժամը 12-ի մոտ էր արդեն, օդում ինչ-որ տարօրինակ բան էի զգում: Մեկ էլ հանկարծ Գարաժների մոտից սկսեց արթնանալ ծղրտոցն եմ լսում... Ամեն ինչ պարզ էր: Նրան հուղարկավորեցինք նույն օրը երեկոյան, հինգ հոգով՝ ես, Մանյա տյուտան, հարևան Ժենյա տյուտան, եղբայրս ու Գաբրիելյան Ալյոշան: Հազիվ այդ ժամին էր խաղաղվել գյուղի երկինքը. ամեն ինչ կարող էր նորից գնդակոծությունը սկսվել:

Օրեր անց միայն գյուղի բուժքույր Սվետան ինձ պատմեց, թե ինչ էր ասել նրան Ալավան, երբ առաջին օգնությունն էր ցույց տալիս. «Սվետա, միևնույն է, ես մեռնելու եմ, բայց վա՛յ իմ երեխեքը...»: Առայսօր այդ ծայրը ականցներիս մեջ է: Շատ բան կա ասելու, բայց ավելի լավ է՝ դրանք ամբարձրել հոգուս խորուն...»:

Այսպես 1992թ. հունիսի 23-ին ընդհատվեց Ալավա Մելքունյանի երկրային կյանքը, որն ընդամենը 36 զարուն էր պարունակում: Նա


գոհվեց իր սիրելի ընկերոջ՝ Արթուրի մահից ընդամենը տասնմեկ օր անց, որի շիրիմի մոտ օրեր առաջ շշմուշակ էր, թե հերթը իրենն է լինելու: Անկատար մնաց այն մարտական առաջադրանքը, որ ծրագրել էին տղաներով այդ օրերին (պետք է հարձակում ձեռնարկելիս Խրամորթի ուղղությունը), բայց տղաները կատարեցին իրենց ընկերոջ սուրբ ուխտը. թշնամուն թույլ չտվեցին ոտք դնել հայրենի հողին: Գյուղի մերձակա բարձունքում Չոփ աղբյուրի մոտ, որտեղ ջրի էր գնացել ծարավ ընկերների համար և թշնամու արձակած արկից մահացու վիրավորվել, դեռ շրշում են ծառերն ու թփերը խիզախ մարտիկի փառքի երգը: Աղբյուրն էլ խոխոջում ու դարերի հավերժությանն է հանձնում ամեն մի ընդհատված կյանքի փառահեղ պատմությունը:

- Այդ դաժան օրվանից անցել է 28 տարի,- փորձում է խոսքն ավարտին հասցնել Ալավայի այրին,- բայց ինձ թվում է, թե դա երեկ է տեղի ունեցել: Նրա ձեռքի շնորհքն այնքան մեծ էր, որ հանդիպում ենք գրեթե ամեն անկյունում: Նրա սարքած իրերն ամեն քայլափոխի մեզ հիշեցնում են, որ իրենց տերն ապրում է առայսօր:

Հայրենիքի աննկուն մարտիկը հետմահու պարգևատրվել է «Արիության համար» մեդալով:

Սուրբյա ԴԱԶԱՐՅԱՆ

ԳԵՐԵՎԱՐՎԱԾ ԵՐԿՐԱՄԱՍ, ՈՐ ՀԱՎԱՍԱՐԱԶԱԾ ԲՈՒՈՐԻՆՍ Է



Կարդալով Վարսենիկ Բաբայան-Սանթրոսյանի «Շահումյան. միացող օրրան» վավերագրական հուշապատում գիրքը (Երևան, «Անտարես» հրատարակչություն, 2017թ.)՝ բնավ ոչ անպասելի մի եզրակացության հանգեցի. եթե Հայոց ցեղասպանությունը հայ ակնատեսների կողմից նկարահանվել, լուսանկարվել ու վավերագրվել, ապա մենք այսօր կունենայինք 20-րդ դարում մարդկության դեմ ուղղված առաջին մեծագույն ոճրագործությունը փաստող ավելի շատ կոմպաներ: Անշուշտ, անցյալ դարասկզբին թուրքերի կողմից Արևմտյան Հայաստանում կատարված ցեղասպանությունը բազմաթիվ վկայագրեր ունի, և անկախ նրանից, որ Թուրքիան պատմական այդ փաստը ժխտում է, քաղաքակիրթ աշխարհի համար այն վաղուց անհերքելի իրողություն է դարձել:

Ինչքանով է Հյուսիսային Արցախի ոսկե դարպասը համարվող Շահումյանի շրջանի անկումը նման Սասունի, Ջեթոնի, Վանի, Կարսի անկմանը: Հարցը կարող ենք թողնել պատմաբանների մեկնաբանությանը՝ մեզ համար կարևորելով այն պարզ նկատառումը, որ հայաշունչ ցանկացած բնակավայր, որը երբևէ թուրք ասկարի ձեռքով իրի ճարակ է դաձել ու գերեվարվել, ուրույն նշանակու-

թյուն ունի հայ ժողովրդի անցյալի, ներկայի ու ապագայի համար: Այս առումով Շահումյանի շրջանն Արցախի տարածքային անվտանգության համատեքստում ունի առանձնահատուկ նշանակություն:

Երբ Ադրբեջանը խոսում է, այսպես կոչված, օկուպացված տարածքների մասին, պարտավոր է հաշվի առնել նաև իր իսկ կողմից հայկական այդ շրջանը բռնազավթելու փաստը: Ընդ որում, հարկ է շեշտել, որ եթե ազերիները ապավինեին միայն սեփական ուժերին, հազիվ թե Շահումյանը հայտնվեր նրանց տիրապետության տակ: Բազմաթիվ համոզիչ փաստեր ու ակնատեսների վկայություններ կան առ այն, որ ազերական օժոնին լայնորեն աջակցել են խորհրդային բանակի զինվորները, մասնավորապես, Կիրովաբադ քաղաքում այն ժամանակ տեղակայված ռուսական դիվիզիայի մարտական ստորաբաժանումները:

Վարսենիկ Բաբայան-Սանթրոսյանի հիշյալ գրքում կան անդրադարձներ տվյալ դեպքերին, որոնց մասին ամձամբ պատմում են բռնատեղահանման ենթարկվածները: Նշենք, որ հեղինակն այդ ժամանակահատվածում լինելով Շահումյանի շրջանի «Նոր ուղի» թերթի աշխատող, ինքն էլ շատ իրադարձությունների ակնատեսն է եղել: Տխրահռչակ «Կոլ-ցո»-ին հաջորդում է զինված պայքարը ադրբեջանական կանոնավոր բանակի դեմ: Հայ աշխարհագրայինների սխրանքի շնորհիվ հնարավոր եղավ ջարդերից փրկել և բռնարարքների գոտուց անվտանգ դուրս բերել հազարավոր շահումյանցիների՝ կանայք, երեխաներ, ծերեր:

Գուցե թե զգայական ու անձնական նկատումների հենքի վրա է ստեղծվել գիրքը՝ անտեսելով աշխարհաքաղաքական և ռազմավարական որոշ ասպեկտներ, բայց օգտագործված լուսանկարները, կենսագրական տվյալները, ակնմատեսների վկայությունները և այլ վավերագրեր, որոնք ջանադրորեն ժողովել է գրքի հեղինակը, մեզ և հատկապես հետագա սերունդներին կարևոր տվյալներ են փոխանցում 1990-1991 թվականներին և հետադարձ Շահումյանում տեղի ունեցած ող-

բերգական դեպքերի և տեղացիների հերոսական պայքարի մասին: Գիրքը չի պատասխանում և թերևս չի կարող պատասխանել մեզ հոգող այն հարցին, թե ինչու, այնուամենայնիվ, Շահումյանը հանձնվեց հակառակորդին: Ըստ էության, Վարսենիկ Բաբայան-Սանթրոսյանը նման խնդրի չի դրել իր առջև, փոխարենը ձգտել է իրեն հասու տեղեկությունները բարեխղճորեն գրառել ու ներկայացնել ընթերցողին: Մենք, օրինակ, կարող ենք այդ գրքի միջոցով ճանաչել ոչ միայն շահումյանցիների յուրահատուկ բնավորությունն ու սովորույթները, այլև լավագույնս իրազեկվել շրջանի ռազմական խորհրդի անդամների մասին, ծանոթանալ ինքնապաշտպանական ջոկատների անվանացանկին:

Պատմական Գյուլիստանն, ավաղ, ներկայումս գտնվում է Արցախի Հանրապետության իրավագրությունից դուրս, սակայն նմանօրինակ գրքերով է նաև արթուն պահվում հավատն ու ծգտումը, որ Մոռվ լեռան հպարտ հայաքցիները մի օր կրկին կհնչի հայ շինականի հպարտ երգը:

«Աշխարհաշեն շահումյանցին բնավեր, աչքը դեպի պապական տուն, կարոտ մնաց սեփական ձեռքերով մշակած բերրի ու պտղատու հողի բերքին. զնա՛ց, զնա՛ց՝ սրտի ու հոգու աչքերով հետ նայելով: Տնքացող հողը մնաց առևանգված ու գերեվարված, ու ստացվեց, որ ժողովրդի չորս տարվա պայքարն անիմաստ էր, անարդյունք, հանիրավի գոհերն ու արդարապահանջ ընդվզումը՝ անպտուղ:

...Հայրենի օրրանս՝ Շահումյանի շրջան: Դարերի խորքից եկող ընդգծված, բովանդակալից պատմություն ունեցող իմ հայրենիքը խորհրդային տարիներին գտնվում էր Ադրբեջանի կազմում: Սխալված չեմ լինի, եթե ասեմ, որ խորհրդային երկրում բոլորն էին անհոգ ապրում և արարում, այդ թվում՝ իմ շահումյանցիները, բայց գտնվելով օտար պետության անմիջական ենթակայության տակ, նրանք առավել զգոնությամբ ու հպարտությամբ էին պահպանում նախնիներից ժառանգած ավանդույթներն ու բարքերը՝ միշտ աշխատելով կենդանի պահել վաղնջական հո-

ղուն արմատ ձգած և այդ հողից սնվող երակը: Շահումյանցու կյանքն ու պայքարը բարի էր, ստեղծարար:

...Մենք՝ շահումյանցիներս, վարանումների մեջ անառագաստ և անդեկ հողն ու երկինքը թողեցինք, զնացի՛նք, զնացի՛նք, հեռացանք մեր երկրից՝ սրտներումս վերադարձի հավատ, հիշողություններում՝ մեր փակված տների ժանգոտած բանալիները: Տնքացող ցավ է: Ես էլ դարձա հայրենի հողից հեռացածներից մեկը:

...Կորցրինք դրախտային մեր երկիրը. օտարին գերի մնաց նա, իսկ մենք՝ նրա վավակները, դարձանք թափառական:

...Անհավատալի էր: Ոչ ոք չէր պատկերացնում, թե հակառակորդին ինչպես հաջողվեց կոտրել սարերում թրծված շահումյանցու կամքը և երկու օրվա մեջ տիրանալ այն ամենին, ինչը չէր հաջողվում տարիներ շարունակ: Շահումյանը կարող էր կանգուն մնալ, եթե թիկունք ունենար: Դարեր շարունակ քաղաքական ոչ մաքուր խաղերը կարմիր թելի նման ձգվում էին հայրենիքից տարեգրության հիմքով, և երբեք բացատրություններ չեն տրվում: 25 տարի է անցել այն օրվանից, բայց առեղծվածային այդ պարտության պատճառը չի բացահայտվել առայսօր: Եվ ահա մեր ժամանակների ևս մի քաղաքական խաղի գոհ դարձավ նաև դարերի փ վեր Մելիք-Բեկլարյաններին պատկանող տարածքը՝ հայոց հնամյա հողը, և օտարի ոտքի տակ տրորվեց մեր անցյալը»:

Արժանի մատուցեք Վարսենիկ Բաբայան-Սանթրոսյանին գրքի հրատարակման համար: Համոզված ենք՝ ամեն շահումյանցի անհուն կարոտի թրթռով կթերթի գրքի էջերը՝ այնտեղ անպայման իրեն հարազատ մի անուն կան պատկեր գտնելու հույսով: Մենք ևս ներքին խլիրտով ենք բացում հերթական էջը, քանզի Շահումյանը հավասարաչափ մեզանից յուրաքանչյուրինն է: Առավելս՝ կլինի ապագա սերունդներինը: Հավատանք:

Ս. ԽԱԶՍՏՐՅԱՆ

ԿԱՐԳ

ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՓԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«08» մայիսի, 2020թ.

N 66-Ն

ք. Ստեփանակերտ

2019-2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՅՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՅ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՅՈՒՐԱՅՄԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏՈՒԳՄԱՆ ԿԱՄ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՆՅՎԱՅՄԱՆ, ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՓՈԽԱՐԿՄԱՆ, ԱՎԱՐՏՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱԾ ԸՆԹԱՑՈՒՄ ԲԱՅԱՎԱՅՄՈ ՍՈՎՈՐՈՂԻ՝ ՀԱՅՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ ԿԱՄ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՐԴ ԱՍՏԻՃԱՆ ՓՈԽԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵՆՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով, 16-րդ հոդվածի 11-րդ մասով և հիմք ընդունելով Արցախի Հանրապետության նախագահի 2020 թվականի ապրիլի 12-ի «Արցախի Հանրապետությունում արտակարգ իրավիճակ հայտարարելու մասին» թիվ ՆՂ-32-Ն հրամանագիրը.

ՀՐԱՍԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել 2019-2020 ուսումնական տարում հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ սույն հրամանով հաստատված կարգով չկարգավորվող հարաբերությունները կարգավորվում են Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարի 2019 թվականի մարտի 19-ի N 60-Ն հրամանով հաստատված կարգով:

Ն.ԱՐԱՐԱԼՅԱՆ

Հավելված
Արցախի Հանրապետության
կրթության, գիտության և սպորտի նախարարի
2020 թվականի մայիսի 8-ի N 66-Ն հրամանի

Կ Ա Ր Գ

2019-2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՅՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՅ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՅՈՒՐԱՅՄԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏՈՒԳՄԱՆ ԿԱՄ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՆՅՎԱՅՄԱՆ, ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՓՈԽԱՐԿՄԱՆ, ԱՎԱՐՏՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱԾ ԸՆԹԱՑՈՒՄ ԲԱՅԱՎԱՅՄՈ ՍՈՎՈՐՈՂԻ՝ ՀԱՅՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ ԿԱՄ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՐԴ ԱՍՏԻՃԱՆ ՓՈԽԱՐԿՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության (այսուհետ՝ Հաստատություն) սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման, ուսման մեջ գերազանց առաջադիմության համար Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) գերազանցության մեդալի հավակնորդների ներկայացման, մեդալի հավակնորդների քննությունների կազմակերպման և պարգևատրման հետ կապված հարաբերությունները:

II. ՍՈՎՈՐՈՂԻ՝ ԴԱՍԱՐԱՆԻՑ ԴԱՍԱՐԱՆ ՓՈԽԱՐԿՐՈՒՄ ԵՎ ԱՎԱՐՏՈՒՄ

2. 1-ին դասարանում սովորողը փոխադրվում է հաջորդ դասարան՝ բնութագրման միջոցով: Առանձին դեպքերում սովորողը կարող է կրկնել տվյալ ուսումնական տարվա դասընթացը՝ ծնողի (օրինական ներկայացուցչի) գրավոր դիմումի, դասվարի հիմնավորված առաջարկության և Հաստատության մասնակավարժական խորհրդի որոշմամբ:

3. 2-րդ, 3-րդ, 5-8-րդ, 10-րդ, 11-րդ դասարանների ուսումնական բոլոր առարկաներից տարեկան 4-10 միավոր գնահատված սովորողը փոխադրվում է հաջորդ դասարան: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք՝ մտավոր հետամնացություն ունեցող սովորողների հաջորդ դասարան փոխադրվում է կատարվում է անհատական ուսուցման պլանով իրականացված գնահատման հիման վրա:

4. 12-րդ դասարանում (ուսումնական հաստատության հանրակրթական հիմնական ծրագրերի 3-րդ աստիճանի ավարտական դասարան) ուսումնական բոլոր առարկաներից տարեկան 4-10 և պետական ավարտական բոլոր քննություններից 8-20 միավոր գնահատված շրջանավարտը ստանում է միջնակարգ կրթության ատեստատ:

5. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք՝ մտավոր հետամնացություն ունեցող սովորողներին տրվում է հավասարագիր, պետական նմուշի ավարտական փաստաթուղթ (հիմնական կրթության վկայական, միջնակարգ կրթության ատեստատ)՝ առանց քննական գնահատականների:

6. Երկրորդ կիսամյակում սովորողի՝ առկա և հեռավար ուսուցման ընթացքում ստացած գնահատականներով ձևավորվում է երկրորդ կիսամյակի գնահատականը:

7. Մատյաններում մարտի 13-ից հետո, բացի կիսամյակային և տարեկան գնահատականներից որևէ գրանցում չի կատարվում: Հեռավար ուսուցման գնահատականները, առկայության դեպքում, ուսումնական հաստատության տնօրենի հաստատմամբ՝ որպես փաստաթուղթ կցվում է մատյանին:

8. Ուսումնական առարկաներից տարեկան գնահատականներ ձևավորվում են կիսամյակային գնահատականների հիման վրա՝ ուսումնական պարապմունքների վերջին շաբաթվա ընթացքում:

9. Երկրորդ կիսամյակում որևէ առարկայից գնահատական չունենալու դեպքում սովորողի՝ տվյալ առարկայի տարեկան գնահատական է համարվում առաջին կիսամյակի արդյունքը:

Երկրորդ կիսամյակի ամբողջ ժամանակահատվածում որևէ առարկայից մեկ գնահատական ունենալու դեպքում, սովորողի ցանկությամբ կարող է տվյալ առարկայի տարեկան գնահատական համարվել առաջին կիսամյակի արդյունքը:

10. «Ֆիզկուլտուրա», «Նախնական զինվորական պատրաստություն» առարկաների պարապմունքներից առողջական վիճակի պատճառով սովորողի ազատված լինելը, ինչպես նաև չդասավանդելու պատճառով որևէ առարկայից տարեկան գնահատական չունենալը չի ազդում նրա՝ հաջորդ դասարան փոխադրվելու կամ Հաստատությունն ավարտելու վրա:

11. 2-12-րդ դասարաններում որևէ առարկաներից (անկախ դրանց քանակից) սովորողի՝ տարեկան գնահատականը 1-3 միավոր լինելու դեպքում, առարկան դասավանդող ուսուցիչը տվյալ սովորողի համար կազմում է անհատական ուսումնական պլան և ժամանակացույց՝ բաց թողածը յուրացնելու և մինչև 2020 թվականի հունիսի 5-ը՝ 12-րդ դասարանցիների համար, մինչև հունիսի 30-ը՝ 2-11-րդ դասարանցիների համար հեռավար վերաքննության միջոցով սովորողին գնահատելու համար:

12. 2-8-րդ, 10-րդ և 11-րդ դասարաններում տարեկան 9-10, առանձին գործող ավագ դպրոցներում՝ նաև 10-րդ և 11-րդ դասարանների փոխադրական քննություններից 9-10 կամ 18-20, 4-րդ դասարանում տարեկան և գիտելիքների ստուգումից 9-10, 9-րդ և 12-րդ դասարաններում տարեկան 9-10, ավարտական, պետական ավարտական քննություններից 9-

10 կամ 18-20 միավոր գնահատված սովորողները պարգևատրվում են Նախարարության գովասանագրով:

13. 8-րդ և 9-րդ դասարանի ուսումնական պլանով նախատեսված բոլոր առարկաներից տարեկան 9-10 և քննական 18-20 միավոր գնահատված սովորողը ստանում է «Գերազանցության» նշումով հիմնական կրթության վկայական: Որևէ առարկայից չգնահատված հիմնական դպրոցի սովորողը «Գերազանցության» նշումով հիմնական կրթության վկայական չի ստանում՝ բացառությամբ հետևյալ դեպքերի.

1) առողջության պատճառով «Ֆիզկուլտուրա», «Նախնական զինվորական պատրաստություն» առարկաներից ազատված լինելը.

2) միջազգային պայմանագրի համաձայն՝ ուսումնառության ընթացքում մեկ անգամ, մեկ տարի արտերկրում ուսում ստացած և ԱՀ վերադարձած սովորողի կողմից առանձին առարկաներ չունենալու դեպքում.

3) դպրոցում համապատասխան մասնագետի բացակայության պատճառով որևէ առարկա չունենալու դեպքում:

III. ԱՄՓՈՓԻՉ ԱՏՈՒԳՄԱՆ ԿԱՄ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՆՅՎԱՅՄՈՒՄ

14. 4-րդ դասարանում գիտելիքների ստուգում չի անցկացվում: Գիտելիքների ստուգման ենթակա՝ «Մայրենի» (գրավոր) և «Մաթեմատիկա» (գրավոր) առարկաների, ռուսերենով ուսուցմամբ դասարանների համար նաև «Ռուսաց լեզու» (բանավոր) համար նախատեսված քննությունների գնահատականները նշանակվում են տարեկան գնահատականների հիման վրա:

15. 9-րդ դասարանում ավարտական քննություններ չեն անցկացվում: Հայոց լեզու և հայ գրականություն (գրավոր), Մաթեմատիկա (գրավոր), Գրականություն (բանավոր), Օտար լեզու (Ռուսերեն, Անգլերեն, Ֆրանսերեն, Գերմաներեն, այլ լեզուներ) սովորողի ընտրությամբ, բանավոր, Բնագիտություն (Ֆիզիկա, Քիմիա, Կենսաբանություն, Աշխարհագրություն) առարկաներ՝ սովորողի ընտրությամբ, գրավոր, Հայոց պատմություն (բանավոր), Ֆիզկուլտուրա (նորմատիվների հանձնում), ռուսերենով ուսուցմամբ դասարանների սովորողների դեպքում նաև «Ռուս գրականություն» առարկայից (բանավոր) առարկաների քննական գնահատականները նշանակվում են սովորողի՝ տվյալ առարկաների տարեկան գնահատականների հիման վրա: Ավարտական փաստաթղթում նշված առարկաների միավորները քննությունների մասում

համապատասխանեցվում են գնահատման 20 միավորանոց սանդղակին:

14. 12-րդ դասարանում պետական ավարտական քննություններ հունիս ամսին չեն անցկացվում.

1) Հայոց լեզու և հայ գրականություն (գրավոր), Մաթեմատիկա (գրավոր), Հայոց պատմություն (գրավոր) առարկաների, ռուսերենով ուսուցմամբ դասարանների սովորողների դեպքում՝ նաև «Ռուս գրականություն» առարկայից (բանավոր) քննական գնահատականները ձևավորվում են դեկտեմբեր ամսին հանձնած քննությունների հիման վրա:

2) Դեկտեմբեր ամսին քննություն հանձնած չլինելու դեպքում Հայոց լեզու և հայ գրականություն (գրավոր), Մաթեմատիկա (գրավոր), Հայոց պատմություն (գրավոր) առարկաներից, ռուսերենով ուսուցմամբ դասարանների սովորողների դեպքում՝ նաև «Ռուս գրականություն» առարկայից (բանավոր) քննական գնահատականները նշանակվում են սովորողի՝ տվյալ առարկաների տարեկան գնահատականների հիման վրա: Ավարտական փաստաթղթում նշված առարկաների միավորները քննությունների մասում համապատասխանեցվում են գնահատման 20 միավորանոց սանդղակին:

3) Դեկտեմբեր ամսին քննություն հանձնած սովորողների քննական գնահատականները նշանակվում են՝ հիմք ընդունելով սովորողի՝ դեկտեմբեր ամսին հանձնած քննությունների և տարեկան գնահատականների առավելագույն արդյունքը, տարեկան գնահատականը՝ համապատասխանեցվելով գնահատման 20 միավորանոց սանդղակին:

ա. «4»-ը համարժեք է 9 միավորին, բ. «5»-ը համարժեք է 11 միավորին, գ. «6»-ը համարժեք է 13 միավորին, դ. «7»-ը համարժեք է 15 միավորին, ե. «8»-ը համարժեք է 17 միավորին, զ. «9»-ը համարժեք է 19 միավորին, է. «10»-ը համարժեք է 20 միավորին.

15. Եթե 9-րդ կամ 12-րդ դասարանի սովորողը «Հայոց լեզու», «Հայ գրականություն», կամ «Գրականություն», «Հայոց պատմություն» առարկաներն ուսումնասիրել է վերջին երկու ուսումնական տարիներին, ապա հիմնական կրթության վկայականում կամ միջնակարգ կրթության ատեստատում այդ առարկայի համապատասխան տողում, սովորողի ցանկությամբ, կարող է գրվել՝ «չի ուսումնասիրել» բառերը: Տվյալ դեպքում սովորողի ավարտական փաստաթղթի համապատասխան տողում գրվում է՝ «ազատված է»:



ԿԱՐԳ

7 16. Հաստատությունում որևէ առարկա չդասավանդվելու պատճառով տվյալ առարկայից գնահատական չունեցող սովորողն իր ցանկությամբ այդ առարկայից կարող է քննություն հանձնել էքստենզ կարգով: Այդ քննության արդյունքը հիմք է հիմնական կրթության վկայականում, միջնակարգ կրթության ատեստատում տարեկան, իսկ քննական առարկայի դեպքում՝ քննական և տարեկան գնահատականներ նշանակելու համար:

IV. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԲԱՑԱԿԱՅԱՇ ՍՈՎՈՐՈՂԻ՝ ՀԱՅՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ ԿԱՄ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՐԴ ԱՍՏԻՃԱՆ ՓՈՒՆԱԴՐՈՒՄԸ

17. Սովորողի բացակայությունների հաշվառումն իրականացվում է մինչև 2020 թվականի մարտի 13-ը:

18. Առաջին կիսամյակում 2-12-րդ դասարաններում 180 և ավելի ժամ բացակայության դեպքում սովորողի կիսամյակային գնահատականները նշանակվում են ընթացիկ գնահատականների առկայության հիման վրա, դրանց բացակայության դեպքում՝ ուսուցչների կողմից հեռավար թեմատիկ ստու-

գումների միջոցով ստացած գնահատականների հիման վրա:

V. ՈՒՍԱՆ ՄԵՃ ԳԵՐԱԶԱՆՑ ԱՈՒԱՆԴԻՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ ՄԵՂԱԼԻ ՀԱՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄԸ

19. Մեղալի հավակնորդները քննություն հանձնում են մեկ առարկայից՝ «Մաթեմատի-

կա», հունիսի 25-ին: Եթե սովորողը «Մաթեմատիկա» առարկան ընտրել է որպես միասնական քննություն, ապա գերազանցության մեղալ տրամադրելիս հիմք է ընդունվում միասնական քննության արդյունքով(ավարտականի մասով):

20. Սույն կարգով չկարգավորվող հարաբերությունները կարգավորվում են Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարի 2019 թվականի մարտի 19-ի N 60-Ն հրամանով հաստատված կարգով:

Իմ օրագրից

1990Թ. ԱՄՅԻՍ

Երրորդ տարին է, ինչ մեր մարզը տագնապալից վիճակում է: Արդար պայքարի է դուրս եկել իր սեփական հողում ապրելու իրավունքն ապահովելու համար: Սակայն նրա դեմ սև ագռավի պես կանգնել է 7 միլիոնանոց նորաթուխ աղբբեջանական պետության ղեկավարությունը, որը նացիոնալիզմով թունավորելով իր ժողովրդին, ամեն կերպ թշնամանք սերմանելով հայ ժողովրդի նկատմամբ՝ չի բավարարվում, միևնույն ժամանակ իր գիշատիչ քաղաքակառուցման Կենտրոնին էլ ստիպում է հայանպաստ որոշումներ ընդունել: Բայց կյանքը ցույց է տալիս, որ որքան էլ ձօճվալի մեր հարցի լուծումը, միևնույն է, արդարությունը հաղթելու է: Եվ պատահական չէ, որ երրորդ տարին է, ինչ մեր մարզում տեղի բնակչության կամքն է գործում: Այդ մասին է խոսում այն փաստը, որ այսօր Մոսկվայի ձեռքում Արցախի վերաբերյալ ոչ թե մեկ, այլ որոշումների մի մեծ ուլունքաշար կա, որոնցից յուրաքանչյուրի մեջ և մեր հարցի լուծման կիսաբաց դուռ են տեսնում, և եթե մեր ժողովուրդը այսօրվա վճռականությանը շարունակի իր պայքարը, ապա լուծումը մոտ կլինի, իսկ եթե այսօրվա վճռականությանը չհարուճակվի, այդ որոշումների ուլունքաշարն ավելի կմեծանա:

Եվ իրոք, այսօր մեզ մոտ շարունակում է տիրել պոլյամիչկո-սաֆոնովյան խիստ ռեժիմը, այն էլ՝ խորհրդային բանակի զորամիավորումների առկայությամբ: Մի բան շատ պարզ է. այդ զորամիավորումները մեզ պաշտպանելու միսիայով չեն եկել: Եթե մեր անվտանգությունը ապահովելու համար լինեին ուղարկված, ապա նրանք տեղավորված կլինեին մարզի սահմանամերձ գոտիներում, այլ ոչ թե մարզկենտրոնում ու շրջկենտրոններում՝ զբաղեցնելով բոլոր հյուրանոցները, ճաշարանները և նույնիսկ՝ ուսումնական շենքերը: Մեր աչքի առաջ այդ զինվորները ադրբեջանական գյուղեր մտնող հսկա ավտոշարայունները թողած՝ մտնում են հայկական գյուղեր և անձնագրային ստուգումների պատրվակով դիմում ամեն տեսակի ստորույթում: Նրանք ադրբեջանական միլիցիայի հետ ձեռք ձեռքի տված՝ չեն բավարարվում ճանապարհներին, աշխատավայրերում և բնակարաններում ու ապրիլի 24-ի սգո միտինգի կազմակերպիչների ձեռքակալությամբ, այլև մտնում են բնակարանները, պահանջում թաքցրած հրացանները և խոհանոցային դանակները: Իսկ որ ադրբեջանցիները հենց 1988-ից սկսած գնել, գավթել, գողացել են իրենց տերիտորիայում գտնվող խորհրդային բանակի զինանոցների տարատեսակ զենքեր ու զինամթերք, աչք են փակում:

Այնպես որ, 1990-ի մայիսն էլ մեզ համար ծանր ռեժիմով սկսվեց: Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ այս տարվա մայիսի 1-ին սպասում էինք բաբվաբնակ մեր մերձավորների գալուստին, որպեսզի մայիսի 2-ին գնանք գյուղի գերեզմանատունը՝ մեր ճնշեցյալների հիշատակը հարգելու, բայց իզուր: Մոռացել էինք, որ Բաբվում արդեն ոչ մի հայ չկա, և չեն կարող գալ, իսկ մեր բարեկամները ցրված են աշխարհով մեկ...

Հուրախություն ինձ, մայիսի 4-ին «Գրական թերթ»-ում ծանոթացա Շահեն Մկրտչյանի «Առաջինը Արցախում» վերտառությամբ հոդվածին, որը հոգուս շատ հարազատ է, ծանոթացրի աշակերտներին, և այսօր, 30 տարի

անց իմ սիրելի «Լուսարար»-ով ուզում եմ ծանոթացնել մեր այսօրվա սերնդին և ընդհանրապես՝ ուսուցիչներին:

Ես Կուսապատի դպրոցի մասին շատ բան գիտեմ և գրել եմ, որ այդ դպրոցի շրջանավարտ Հովսեփ Աթաբեկյանի ջանքերով Ղարաբաղում գերմաներենից հայերեն թարգմանվել է Մարքսի և Էնգելսի «Կոմունիստական կուսակցության մանիֆեստ»-ը և Էնգելսի «Սոցիալիզմի գարգացումը ուտոպիայից դեպի գիտություն» գիրքը, որ Աթաբեկյանը 1894թ. նամակով խնդրել է Էնգելսին առաջաբան գրել «Մանիֆեստի» հայերեն հրատարակության համար և ստացել ողջույնի պատասխան, բայց ցավոք, առաջաբան չի գրել՝ պատասխանելով, որ ինքը չի կարող այնպիսի թարգմանված գրքի համար առաջաբան գրել, որի լեզվին չի տիրապետում: Գիտեմ նաև, որ այդ դպրոցի շրջանավարտներ են Տիգրան, Ալեքսանդր և Էլենա Բեկլադյանները, որոնցից առաջինը Հայաստանի Հանրապետության դեսպանն էր Թիֆլիսում, իսկ երկրորդը՝ Խորհրդային Հայաստանի արտաքին գործերի նախարարը: Գիտեմ Հակոբ Կամարու, Թեոդորոս Միրզաբեկյանի և այլոց մասին, բայց չգիտեմ, որ մայիս-մեկյան տոնը առաջին անգամ նշվել է 99 տարի առաջ՝ 1891թ. հենց այդ դպրոցում: Ըստ որում, երբ Մայիսի 1-ը, որ այսօր կորոնավի-րուսի պատճառով ոչ մի երկրում չտոնվեց, ապա ուղիղ 130 տարի առաջ՝ 1890թ. այն մեծ շուքով նշվել է Ամերիկայի և Եվրոպայի բազմաթիվ երկրներում, իսկ Ռուսաստանում էլ՝ զաղտնի: Բայց ինչպես վերը նշեցի, Կուսապատի դպրոցում էլ այն նշվել է մեկ տարի անց՝ 1891թ.: Անդրկովկասյան շատ պատմաբանների վկայությամբ մայիսմեկյան տոնակատարությունը Անդրկովկասում նշանակված է 1898թ. Թիֆլիսի երկաթուղայինների գործադուլով, 1900թ. Սաբունչիի զաղտնի հավաքով և միայն 1902 թվականին է, որ հազարավոր ցուցարարների մասնակցությամբ նշվել է մայիսմեկյան տոնը: Իսկ Երևանում այն նշվել է 1899թ., այն էլ՝ Հրազդանի կիրճում: Այնպես որ, հպարտանալի է, որ Մայիսի 1-ը Արցախում նշվել է Ամերիկայում, Եվրոպայում և Ռուսաստանում անցկացված առաջին մայրկայից ընդամենը մեկ տարի հետո, այն էլ՝ Անդրկովկասում առաջինը: Արժանահիշատակ Շահեն Մկրտչյանի հողվածից իմանում ենք, որ այդ միջոցառման մասնակիցներ են եղել Կուսապատի դպրոցի վարիչ Գրիգոր Իսրայելյանը, ընդհանուր ուսուցիչ Անդրիաս Միրզոյանը, կրոնի դաստուր Հուսիկ Տեր-Սահակյանը, արհեստանոցի ուսուցիչ Հովհաննես Աղայանը և ուրիշներ: Ահա թե ինչպես է կատարվել. 1891թ. ապրիլի 30-ին Հ. Աղայանը դպրոցի բոլոր աշակերտներին հայտնում է, որ վաղը՝ մայիսի 1-ին, առանց դասագրքերի հավաքվեն դպրոցի բակում և սպասեն հատուկ կարգադրության: «Այդպես էլ արինք,- իր հուշերում գրում է Թ. Տեր-Ղանիելյանը (նա այն ժամանակ սովորում էր ավարտական 4-րդ բաժնում)՝ առանց իմանալու, թե ինչ է կատարվելու: Առավոտյան եկան բոլոր ուսուցիչները, բացի կրոնի դասատու՝ գյուլաթաղի տեր Հուսիկից: Աղայանը մեզ կանգնեցրել է երկշար ձևով: Դպրոցն ուներ երգչախումբ, որը Աղայանն էր ստեղծել: Ի դեպ, նա հրաշալի ձայն ուներ. «Ուսուցիչներն ընկան առաջ, նրանց ետևից գնում էր երգչախումբը, ապա մյուսները: Այդպես երգելով Կուսապատի դպրոցի ուսուցիչ-աշակերտները հասնում են

Գյուլաթաղի դիմացի մեծ այգին, որը պատկանում էր տեր Հուսիկին: Քանի որ Կուսապատը գտնվում էր ցարական, այսպես կոչված, ժողովրդական ուսումնարանների գլխակից տեսուչի հսկողության ներքո, ուսուցիչները կազմակերպիչները նախօրոք պայմանավորվել էին այն անցկացնել Գյուլաթաղ գյուղում: Քանի որ Աղայանը աշակերտներին հաճախ տանում էր զբոսանքի և ուսումնասիրում շրջակա վայրերը, հետևապես այդ օրվա երթը կասկածի առիթ չէր կարող տալ: Երբ մտան այգի և խմբվեցին ուսուցիչների շուրջը, այդժամ Աղայանը բարձրաձայն հարցրեց. «Երեխաներ, գիտե՞ք այսօր ինչ օր է»: Ցուցարարներից մեկը պատասխանեց. «Վարժապետ, այսօր գարնան ամենագեղեցիկ օրերից մեկն է, մեր չորս կողմը կանաչ ու ծաղիկ է»: «Դա ճիշտ է,- ասաց Աղայանը,- բայց այս օրը ունի և ուրիշ՝ չաշխատելու, իրար հետ համաբաշխ լինելու իմաստ: Հետագայում կհիմնաք, կհասկանաք, իսկ հիմա որ հարցնող լինի, թե ինչու դպրոցում չէիք, կասեք, որ ուսուցիչները տարել են տեր Հուսիկի այգուն ծանոթանալու, որ մենք էլ կիրառենք նրա հարուստ փորձը: Դե հիմա գնացեք այգում զբոսանք, մինչև ձեզ կկանչենք»: Քիչ հետո կանչեցին: Տեղի ունեցավ ընդհանուր ճաշկերույթ:

Ճաշի ժամանակ երգեցինք հայրենասիրական երգեր: Աղայանն ու տեր Հուսիկը նույնպես առանձին-առանձին երգեցին: Երեկոյան նույն կարգով վերադարձանք տուն: Շատերի համար զաղտնիք մնաց չաշխատելու, համերաշխություն հայտնելու այդ առիթը: Բայց նեղ շրջանում. բարձր խմբերում սովորող աշակերտներին տեղյակ պահեցինք Հիկազոյի դեպքերի և Երկրորդ ինտերնացիոնալի որոշման նշանակության մասին»:

Այսպիսով, Կուսապատի դպրոցը Հայաստանում, ինչպես և Անդրկովկասում առաջինն է տոնել մայիսի 1-ը: Իսկ այսօր...

Այս բոլոր տեղեկությունները 1960-ական թվականներին իմացել է Շահեն Մկրտչյանը մարզային թանգարանի դիրեկտորից և հանդիպել է բաբվաբնակի 92-ամյա Թեոդորոս Տեր-Ղանիելյանին ու գրի առել: Իսկ ես այդ նյութը վերցրի 1990թ. մայիս ամսվա օրագրիցս և հարմար գտա իրագրել դարձնել ընթերցողներին ու խնդրել մեր նախարարության այրերին, որ եկող տարի՝ 2021թ. մայիսի 1-ին այդ տոնի 130-ամյակը նշեն Կուսապատում: Եվ եթե ողջ լինեմ, ես էլ մեծ ուրախությամբ կմասնակցեմ ու որպես 92-ամյա այր, կպատմեմ ներկաներին:

Մենք կարծում էինք, թե պրեզիդենտ ընտրվելուց և հանդիսավոր երթում տալուց հետո Գորբաչովը չի թույլատրի ազգամիջյան խտրականություն, նացիոնալիզմ և խաղաղ ճանապարհով կլուծի մեր հարցը: Հույսեր ենք կապում ՀիՄՀ ԳԽ ընտրությունների հետ, որին առաջին անգամ մասնակցում է արցախահայությունը, և ամեն ինչ անում ենք, որ լավագույններից լավագույններին ընտրենք, ավելի ճիշտ՝ թեկնածուներ առաջադրենք: Իսկ Ադրբեջանը ոչ մի բանի առաջ չի կանգնում, ամեն կերպ արգելակում ԼՂԻՄ-ից պատգամավորների առաջադրումը: Պոլյանիկո-սաֆոնովյան ռեժիմն այնքան է խստացվել, որ նույնիսկ մոռացել էինք մայիսյան տոները, այդ թվում՝ Մեծ հաղթանակի 45-ամյակը:

Կազմկոմիտեն ճտեր է հանել. բոլոր շրջաններում ստեղծվել են կազմկոմիտեներ, որոնց

նախագահներ են նշանակվում բաբվաբնակ ռուսներ: Այսպես, կային Աղդարայի, Խոջալուի, Խոջալանդի և Հադրութի կազմկոմիտեներ: Շատ ժամանակ նրանք գտնվում էին մարզի տարածքից դուրս: Օրինակ՝ Մարտակերտի, Ասկերանի, Մարտունու կազմկոմիտեները մնում էին Աղդանում, Հադրութի կազմկոմիտեի նախագահը՝ Ֆիզուլիում ու Հադրութում տեղակայված սահմանապահ զորամասում և այլն: Թե՛ կազմկոմիտեները և թե՛ արտակարգ դրության շտաբներն ու Սաֆոնովի անձնակազմը և ԽՍՀՄ վերահսկիչ դիտորդական հանձնաժողովը՝ Վլադիմիր Կոնստանտինովիչ Ֆոտեևի գլխավորությամբ, ամեն ինչ անում են, որ Արցախում Հայաստանի ԳԽ պատգամավորների ընտրությունները ձախողվեն: Մինչդեռ այդ ընտրությունները նախատեսված են մայիսի 20-ին, և նախօրեին մարզ է մտցվել լրացուցիչ զորք, որը շրջապատել է բոլոր ընտրական տեղամասերը: Ընտրության օրը զրահամեքենաներով, բարձրախոսներով ամեն ինչ անում են, որ ձախողեն ընտրությունները: Մինչդեռ հակառակ նրանց մարզի՝ ավելի քան 90 հազար ընտրողներ, բոլոր դժվարությունները հաղթահարելով, իրենց ծայրը տվեցին առաջադրված թեկնածուներին: ՀիՄՀ ԳԽ պատգամավորներ ընտրվեցին Սլավիկ Առուշանյանը, Վահրամ Աթանեսյանը, Գրիշա Բարյանը, Համլետ Գրիգորյանը, Էդուարդ Ղուկասյանը, Ռազմիկ Դանիելյանը, Իշխան Ավետիսյանը, Գեորգի Պետրոսյանը, Սերժ Սարգսյանը, Վիգեն Շիրինյանը և ուրիշներ: ՀիՄՀ ԳԽ պատգամավորներ են ընտրվում նաև Բուտիրկայի բանտում կալանավորված Արկադի Մանուչարովը, Ռոբերտ Քոչարյանը, Վլադիմիր Աղաջանյանը, Ռազմիկ Պետրոսյանը և Ռուլես Աղաջանյանը:

Ավարտվում է ուսումնական տարին, սակայն...

Ցավալի է, որ Ադրբեջանին բազմակողմանի օգնություն է ցույց տալիս արտակարգ դրության ռուսական զորամասը: Շուշին օղակել է միակ հայկական մնացած Քարին տակը, Ստեփանակերտում և շրջիկ կենտրոններում սովորական են դարձել շուրջկալները, առանձին մարդկանց որոգայթումը, ֆերմաների և անհատական նախիրների բռնագրավումը, դիմադրողների սպանությունը, անասնաշենքերը և բնակելի տները կրակի մատնելը: Այսպես, Բերդաձորի ենթաշրջանի Հին շեն գյուղից մայիսի 10-ին կոլվարչության նախագահ Սարգսյանի ջանքերով թուրքերից Շուշիի պարենը Շուշվա ղեկավարների ցուցումով հայկական գյուղերն էր խուզարկում ու թալանում: Մարզի միլիտար թունամյանին փոխարինել է Ֆիզուլիի նախկին պարեն Կոլոյովը, որի առաջին հրամանով մարզի տարածքում օրինավոր են համարվում ռուսական և ադրբեջանական գրության կնիքները:

20.05. 1990թ. Գեներալ Սաֆոնովի հրամանով գիշերվա ժամը 3-ին տեղի ունեցավ զինվորական հատուկ օպերացիա: Գութաններով Մարտակերտի Նորաշեն օդանավակայանի թռիչքազոտին փորեցին և անօդագործելի դարձրին:

Այնպես որ, չնայած մեր բնակչությունն իր ղեկավարների հետ չի ենթարկվում կազմկոմիտեներին, բայց նրանք իրենց սև գործն անպատիժ կատարում են՝ ավելի ջղայնացնելով մեզ:

ԴԻՄՈՐԴ - 2020

ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«6» մայիսի 2020 թ.

ք.Ստեփանակերտ

N 335 -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՋԱՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՀԱՏՎԱԿԵԼԻՔ 2020-2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՅ՝ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԵՊԱՍՏԵՐԻ ԶԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՉԻ ԼՐԻՎ ՓՈՒՆՀԱՏՈՒՅՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ԲԱՐՋԱՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՅ՝ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՉԻ ՄԱՍՆԱԿԻ ԶԵՂԴԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԲԱԿԱՆԱՎՐԻ ՈՒ ԱՆԸՆԴՀԱՏ ԵՎ ԻՆՏԵՐՍՅԱԿՎԱՏ ԿՐԹԱԿԱՆ ՇՐԱԳՐՈՎ ՏԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՂ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 3-րդ կետով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում Արցախի Հանրապետությանը հատկացվելիք 2020-2021 ուսումնական տարվա ընդունելության մասնագիտությունների և պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրով տեղերի ցանկին՝ համաձայն հավելվածի:

2. Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարությանը՝ սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հաստատում եմ՝ ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՅ Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված Արցախի Հանրապետության կառավարության 6 մայիսի 2020 թվականի N 335-Ն որոշման

Ց Ա Ն Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՋԱՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՀԱՏՎԱԿԵԼԻՔ 2020-2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՅ՝ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԵՊԱՍՏԵՐԻ ԶԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՉԻ ԼՐԻՎ ՓՈՒՆՀԱՏՈՒՅՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ԲԱՐՋԱՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՅ՝ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՉԻ ՄԱՍՆԱԿԻ ԶԵՂԴԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԲԱԿԱՆԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ՇՐԱԳՐՈՎ ՏԵՂԵՐԻ

Table with 4 columns: Code, Name, Academic load, and other details. Includes sections for 'ՎՃԱՐՈՎԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՇՐԱԳՐՈՎ' and 'ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՇՐԱԳՐՈՎ'.

Table with 4 columns: Code, Name, Academic load, and other details. Includes sections for 'ՎՃԱՐՈՎԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՇՐԱԳՐՈՎ' and 'ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՇՐԱԳՐՈՎ'.

ԴԻՄՈՐԴ - 2020

Table with 4 columns: Code, Name, Value 1, Value 2. Includes sections like 'ՊՐԵՍՏՐԱԿԱՆ ԳՐԱՊԻԱՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՎՈՐՈՒՄՎ' and 'ՊԵՏԱԿԱՆ ԲՈՒՄՆԱԿԱՆ ԳՐԱՊԻԱՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՈՒՄՆԱԿԱՆ ԳՐԱՊԻԱՏԻ'.

Table with 4 columns: Code, Name, Value 1, Value 2. Includes sections like 'ՊԱՐԵՆՏԱԿԱՆ ԿՐԹՈՒՄ' and 'ՊԵՏԱԿԱՆ ԲՈՒՄՆԱԿԱՆ ԳՐԱՊԻԱՏԻ'.

ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱՆ Ա. ԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Յ ՈՒ Մ

«6» մայիսի 2020 թ.

ք.Ստեփանակերտ

N 336-Ն

ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՉՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2020-2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՅՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԵՊԱՍՏՆԵՐԻ ԶԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՉԻ ԼՐԻՎ ՓՈՈՏՀԱՏՈՒՅՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ԲԱՐՉՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՅՆ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՉԻ ՄԱՍՆԱԿԻ ԶԵՂԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԲԱԿԱՆԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՅՄԱՆ ՏԵՂԵՐԸ ԵՎ ՇԵՌԱԿԱՆ ՈՒՍՈՒՅՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ ՏԵՂԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

- 3) ինք ընդունելով «Կրթության մասին» օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասին ու «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը որոշում է.
1. Հաստատել Արցախի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների 2020-2021 ուսումնական տարվա ընդունելության՝ ըստ մասնագիտությունների պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (ամվճար) և բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) բակալավորի կրթական ծրագրով առկա ուսուցման տեղերը և հեռակա ուսուցման վճարովի տեղերը՝ համաձայն հավելվածի:
2. Սահմանել, որ Արցախի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների վճարովի ուսուցման համակարգում ուսման վարձի չափը որոշում են Արցախի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունները՝ համաձայնեցնելով Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության հետ:
3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի փետրվարի 27-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու կարգը հաստատելու մասին» N81 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված սոցիալական խմբերի ֆինանսավորումը կատարել Արցախի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին:
4. Արցախի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների 2020-2021 ուսումնական տարվա ամվճար տեղերի (պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ) տասը տոկոսը (առնվազն մեկ տեղ) ըստ մասնագիտությունների հատկացնել պարտադիր զինվորական ծառայությունից զորացրված քաղաքացիներին:
5. Սույն որոշման կատարման հսկողությունը հանձնարարել Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարությանը:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական իրապարակմանը հաջորդող օրվանից:

Հաստատում եմ ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված Արցախի Հանրապետության կառավարության 6 մայիսի 2020 թվականի N 336-Ն որոշման

Ց Ա Ն Կ

ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՉՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2020-2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՅՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԵՊԱՍՏՆԵՐԻ ԶԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՉԻ ԼՐԻՎ ՓՈՈՏՀԱՏՈՒՅՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ԲԱՐՉՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՅՆ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՉԻ ՄԱՍՆԱԿԻ ԶԵՂԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԲԱԿԱՆԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՅՄԱՆ ՏԵՂԵՐԻ ԵՎ ՇԵՌԱԿԱՆ ՈՒՍՈՒՅՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ ՏԵՂԵՐԻ

1. ԱՐՑԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ 1.1 ԲԱԿԱՆԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՅՄԱՆ)

Table with 4 columns: Code, Name, Value 1, Value 2. Lists educational programs and their corresponding values.

Table with 4 columns: Code, Name, Value 1, Value 2. Lists educational programs and their corresponding values.

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԵՐ

1.2 ԲԱՎԱՍԱԿՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ՀՆՈՒԿԱ ՈՒՍՈՒԹՈՒՄ)

Table with 3 columns: Code, Description, and Value. Rows include categories like 'Ընդհանուր մանկավարժություն' and 'Ֆինանսային համակարգեր'.

2.«ՃՈՒԹԻՒ ՏԵՆՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՍՏՐԱՆ» ՀԻՄՆԱՂՐԱՎ 2.1 ԲԱՎԱՍԱԿՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՅՈՒՄ)

Table with 4 columns: Code, Description, 'Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը', and 'Բուժի կողմից ուսման վարձի մասնակի գեղջի կիրառման իրավունքներով (վճարովի) տեղերը'.

2.2 ԲԱՎԱՍԱԿՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ՀՆՈՒԿԱ ՈՒՍՈՒՅՈՒՄ)

Table with 3 columns: Code, Description, and Value. Rows include categories like 'Ազդեցիկներ' and 'Ստատիստիկական տեխնոլոգիաներ'.

2.3 ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՅՈՒՄ)

Table with 4 columns: Code, Description, 'Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով փոխհատուցմամբ (անվճար) տեղերը', and 'Քուլտուրայի կողմից ուսման վարձի մասնակի գեղջի կիրառման իրավունքներով (վճարովի) տեղերը'.

ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵՎԱՎԱՐԻ ԱՊԱԶԻՆ ՏԵՂԱԿԱՆ Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«6» մայիսի 2020 թ.

ք.Ստեփանակերտ

N 337-Ն

ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՏՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2020-2021 ՈՒՍՈՒՄԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ` ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՅՈՒՄԱՆ ԵՊԱՍՏՆԵՐԻ ԶԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՉԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՅՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ՈՒՍՈՒՄԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՅՈՒՄԱՆ ՎԱՐՉԻ ՄԱՍՆԱԿԻ ԶԵՂԳԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԱՌԿԱ ՈՒՍՈՒՅՈՒՄԱՆ ՏԵՂԵՐԸ ԵՎ ՀՆՈՒԿԱ ՈՒՍՈՒՅՈՒՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ ՏԵՂԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կրթության մասին» օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ կետը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը որոշում է.

- 1. Հաստատել Արցախի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների 2020-2021 ուսումնական տարվա ընդունելության` ըստ մասնագիտությունների պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձի մասնակի գեղջի կիրառման իրավունքներով (վճարովի) առկա ուսուցման տեղերը և հեռակա ուսուցման վճարովի տեղերը` համաձայն հավելվածի:
2. Սահմանել, որ Արցախի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների վճարովի ուսուցման համակարգում ուսման վճարի չափը որոշում է տվյալ ուսումնական հաստատությունը` համաձայնեցնելով Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության հետ:
3. Թույլատրել Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարությանը` պահուստային տեղերի բաշխումը և ըստ հաստատությունների թափուր մնացած տեղերի վերաբաշխումը իրականացնել նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններին տրամադրված տեղերի շրջանակում:
4. Սույն որոշման կատարման հսկողությունը հանձնարարել Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարությանը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հաստատում եմ ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ Բ. ՄԱՅԱԿՅԱՆ

ԴԻՄՈՐԴ - 2020

Հավելված Արցախի Հանրապետության կառավարության 6 մայիսի 2020 թվականի N 337-Ն որոշման

ԱՐՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՉԵՍԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2020-2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ` ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՅՈՒՄՆԱԿԱՆ ԵՊԱՍՏՆԵՐԻ ԶԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՋԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՅՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՅՈՒՄՆԱԿԱՆ ՎԱՐՋԻ ՄԱՍՆԱԿԻ ԶԵՂԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆԵՐՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ՍՈՎԱՆ ՈՒՍՈՒՅՄԱՆ ՏԵՂԵՐԻ ԵՎ ՀԵՌԱԿԱՆ ՈՒՍՈՒՅՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ ՏԵՂԵՐԻ

1. ՄՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ԹԱՄԱՐԱ ԶԱՄԱՆԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԾԵՎԱԿԱՆ ԶՈՒՆԵՐ

Table with 5 columns: Պատկեր, Մասնագիտության անվանումը, Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը, Քոլեջի կողմից ուսման վարձի մասնակի գեղջի կիրառման (վճարովի) տեղերը, and sub-columns for Գիմնական կրթությամբ and Միջնակարգ կրթությամբ.

2. ՄՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՍԱՅԱԹՆՈՎԱԶԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՐԱԾՅԱԿԱՆ ԶՈՒՆԵՐ

Table with 4 columns: Պատկեր, Մասնագիտության անվանումը, Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը, and Քոլեջի կողմից ուսման վարձի մասնակի գեղջի կիրառման (վճարովի) տեղերը.

3. ՇՈՒԾԻՒ ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԶՈՒՆԵՐ 3.1. ԱՐԿԱ ՈՒՍՈՒՅՄ

Table with 4 columns: Պատկեր, Մասնագիտության անվանումը, Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը, and Քոլեջի կողմից ուսման վարձի մասնակի գեղջի կիրառման (վճարովի) տեղերը.

3.2. ՀԵՌԱԿԱՆ ՈՒՍՈՒՅՄ

Table with 4 columns: Պատկեր, Մասնագիտության անվանումը, Քոլեջի կողմից ուսման վարձի մասնակի գեղջի կիրառման (վճարովի) տեղերը (միջնակարգ կրթությամբ), and Քոլեջի կողմից ուսման վարձի մասնակի գեղջի կիրառման (վճարովի) տեղերը.

4. ՄՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՊԱՐԱՐՎԵՍԻ ԶՈՒՆԵՐ

Table with 3 columns: Պատկեր, Մասնագիտության անվանումը, and Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը.

5. ՄՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ԱՐՉԵՍԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Table with 4 columns: Պատկեր, Մասնագիտության անվանումը, Անվճար տեղերը (հիմնական կրթությամբ), and Վճարովի տեղերը (միջնակարգ կրթությամբ).

6. ՄԱՐՏՈՒՆՈՒ ԱՐՉԵՍԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Table with 3 columns: Պատկեր, Մասնագիտության անվանումը, and Անվճար տեղերը (հիմնական կրթությամբ).

7. ՇՈՒԾԻՒ «ԵՆԻԿ ՍՈՉՅԱՆ» ԱՐՉԵՍԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ (ԱՐԿԱ ՈՒՍՈՒՅՄ)

Table with 4 columns: Պատկեր, Մասնագիտության անվանումը, Անվճար տեղերը (հիմնական կրթությամբ), and Անվճար տեղերը (միջնակարգ կրթությամբ).

ԱՐՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵՎՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՐԱԿԱՆ Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«6» մայիսի 2020 թ.

ք.Ստեփանակերտ

N 338-Ն

ԱՐՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՋԱՐԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 2020-2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱԸ ԱՄՊԻՐԱՏՈՒՄԶԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃԱՆԿԸ, ԱՆՎՃԱՐ ԵՎ ՎՃԱՐՈՎԻ ՈՒՍՈՒՅՄԱՆ ՏԵՂԵՐԸ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՅՈՒՄՆԱԿԱՆ ԵՊԱՍՏՆԵՐԻ ԶԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՋԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՅՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ԲԱՐՋԱՐԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՅՈՒՄՆԱԿԱՆ ՎԱՐՋԻ ՄԱՍՆԱԿԻ ԶԵՂԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆԵՐՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ՍՈՎԱՆ ԵՎ ՀԵՌԱԿԱՆ ՈՒՍՈՒՅՄԱՆ ՄԱԿԻՍՏՐՈՍԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՏԻՐԱԳՐՈՎ ՏԵՂԵՐԸ` ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կրթության մասին» օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասը ու «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետը` Արցախի Հանրապետության կառավարությունը որոշում է.

- 1. Հաստատել` 1) Արցախի պետական համալսարանի 2020-2021 ուսումնական տարվա ասպիրանտուրայի ընդունելության մասնագիտությունների անվճար և վճարովի ուսուցման տեղերի ցանկը` համաձայն N1 հավելվածի: 2) Արցախի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների` 2020-2021 ուսումնական տարվա ընդունելության` պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձի մասնակի գեղջի կիրառման իրավունքներով (վճարովի) առկա և հեռակա ուսուցման մագիստրոսի կրթական ծրագրով տեղերը` ըստ մասնագիտությունների` համաձայն N2 հավելվածի: 2. Թույլատրել Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարությանը` պահուստային տեղերի բաշխումը և ըստ հաստատությունների թափուր մնացած տեղերի վերաբաշխումն իրականացնել բարձրագույն ուսումնական հաստատություններին տրամադրված տեղերի շրջանակում: 3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հաստատում եմ ԱՐՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ Բ. ՍԱՅԱԿՅԱՆ

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԵՐ

Հավելված N 1
Արցախի Հանրապետության կառավարության
6 մայիսի 2020 թվականի
N 338-Ն որոշման

Ց Ա Ն Կ

ԱՐՁԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱՍԱՐԱՆԻ 2020-2021 ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԿԱՆ ԱՍՊԻՐԱՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՆՎՃԱՐ ԵՎ ՎՃԱՐՈՎԻ ՌԻՍՈՒՅՄԱՆ ՏԵՂԵՐԻ

Table with 4 columns: Code, Description, Budget, Actual. Rows include categories like Ը.00.02, Ը.00.03, Ժ.01.06, etc.

ԱՐՁԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՅԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵՎՎՈՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱՆ Ա. ԱԶԱՐՅԱՆ

Հավելված N 2
Արցախի Հանրապետության
կառավարության
6 մայիսի 2020 թվականի
N 338-Ն որոշման

ԱՐՁԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2020-2021 ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՊԵՏՈՒՆԱԿԱՆ ԿՈՐՄԻՏԵՆ ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՐՄԻՏԵՆ ԱՐՁԱՆԻ ՎԵՐԱԿԱՆ ԶԵՂԻՆ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆԵՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՌԻՍՈՒՅՄԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՏԵՂԵՐԻՆ՝ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. ԱՐՁԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱՍԱՐԱՆ

Table with 4 columns: Code, Description, Budget, Actual. Rows include categories like 011301.00.7, 011401.00.7, 022201.00.7, etc.

ԱՐՁԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«08» մայիսի, 2020թ.

N 67/Մ

ք. Ստեփանակերտ

2020 ԹՎԱԿԱՆԻ 2-ՐԿ ԶԵՆԱԿՐԶԱՆԻ ԴՐՍԵԿՈՒԹՅԱՆ ԶԵՎՈՎ (ԷՔՍՏԵՆՆ) ԱՎԱՐՏԱԿԱՆ ԸՆՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԱՆՎՃԱՅՄԱՆ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 23.10.2012 թվականի N 181-Ն հրամանով հաստատված՝ «Դրսեկության ձևով (էքստենն) փոխադրական և ավարտական քննություններ կազմակերպելու կարգի» 20-րդ կետի և 23-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները և հիմք ընդունելով Արցախի Հանրապետության նախագահի 2020 թվականի ապրիլի 12-ի Արցախի Հանրապետությունում արտակարգ իրավիճակ հայտարարելու մասին» թիվ ՆՅ-32-Ն հրամանագիրը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

- 1. Դրսեկության ձևով (էքստենն) ավարտական քննություններ անցկացնելու իրավունքը վերապահել Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության «Ստեփանակերտի Ա.Սախարովի անվան հ.8 միջնակարգ հոսքային դպրոց» ՊՈԱԿ-ին (այսուհետև ուսումնական հաստատություն):
2. Փաստաթղթերի ընդունումը կազմակերպել ուսումնական հաստատությունում մայիսի 11-ից մինչև 22-ը ընկած ժամանակահատվածում:
3. Քննությունների անցկացման վերջնաժամկետ սահմանել 2020թ. հունիսի 5-ը:
4. Քննությունների անցկացման ձևաչափի ընտրությունը և քննական առաջադրանքների կազմումը վերապահել ուսումնական հաստատությանը:
5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել նախարարի տեղակալ Մ. Համբարձումյանին:

Ն.ԱՐԱԲԱՆՅԱՆ


2.«ՇՈՒՇԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Table with 5 columns: Code, Description, Budget, Actual. Rows include categories like 021201.00.7, 041801.00.7, 061105.00.7, etc.

ԱՐՁԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՅԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵՎՎՈՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱՆ Ա. ԱԶԱՐՅԱՆ

ԱՇՈՏ ԳՐԱԾԻ-ՈՍ

«ԱՐԻ ԳՆԱՆՔ ԴԱՐԱՔԱՂ»



«Բանաստեղծին մի՛ սպանեք, առանց այն էլ նրա կյանքը շատ կարճ է այս աշխարհում»: Վանիկ Սանթրյան

Աշոտ Գրաշի (ծննդյան վկայականով՝ Աշոտ Բաղդասարի Գրիգորյան)։ Նա եթերային բանաստեղծ է, մի օր նա գարնան ամպ է, մի ուրիշ անգամ անձրև է դառնում, որ ջրի հայրենիքի ծաղիկները, ապա լեռ դառնում, որ ամպը գա իր կրծքին քնի, թռչունների հետ թռչուն դառնում։ Բանաստեղծի պոեզիան մշտական ճախրանք է, բայց երբ պետք է վար իջնել հողի համն ու հիմնը փառաբանելու, իջնում է գիրկը բնության։

Ես գարուն եմ երիտասարդ, Ես և ամառ եմ բերքածածան, Ես և աշուն եմ ոսկեհնձան, Եվ ձյունոտ ձմեռ եմ ալեգարդ։

Ցավոք, նա երկար չապրեց աշխարհի վրա, որովհետև չուզեց խախտել բանաստեղծական կարճ կյանքի ավանդույթը։ Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հայ և համաշխարհային գրականության մեծերը 50 և ոչ ավելի տարիք են ապրել։

Պարոյր Սևակն ասում էր. «Բա բանաստեղծն էլ հիսուն տարի ապրի՞», իսկ ինքը կյանքից հեռացավ, թե հեռացրին ընդամենը 47 տարեկանում։

Պետրոս Դուրյան, Հովհաննես Թումանյան, Վահան Տերյան, Եղիշե Չարենց... Ալեքսանդր Պուշկին, Միխայիլ Լերմոնտով, Բայրոն, Շեքսպիր, Դանթե և էլի-էլի...

Հայ պոեզիայի քննադատը, անկրկնելի Հովհաննես Շիրազը (Օնիկ Կարապետյան) չապրեց 70 տարի, իսկ նրա որդի՝ բանաստեղծ Սիփան Շիրազը դրա կեսն էլ չապրեց։ Ահա գրական ինչպիսի մեծերի և ինչ տարիներ են կորցրել, որ գրական աշխարհը ինչ իմաստ, միգուցե...

Չենց այդ առիթով ուզում եմ հիշել... Ասում են, երբ երկար ժամանակ Հ. Շիրազի գերեզմանին տապանաբար չէին դնում, չի համբերել ու երկնային արքայությունից տրտնջացել է. «Երբ դեռ ապրում էի, ինձ վրա ենք քար շարտեցին, որ հիմա քար չեն գտնում, որ վրես դեն...»։

Անգամ Արամայիս Սահակյանի խոսքով ասած՝

Չարերն ինչե՛ր չարեցին, Չարչարեցին Չարենցին. Չնչին մեղքեր ծարեցին՝ Սեզ ճակատին շարեցին։ Եվ... «Հանճար է»,- ճառեցին։ Չարերն ինչե՛ր չարեցին...

Այս խոսքերն ընթերցելիս հոգուդ խորքում ցավ են զգում և ավելին, իսկ ես այս տողերի հեղինակին կանվանեի մեր հայ գրականության «լեզվի ու խոսքի դիպուկահար»։

1990թ. ԼՂՀ իշխանությունների, մասնավորապես վարչապետ Անուշավան Դանիելյանի և Ազգային ժողովի նախագահ Օլեգ Եսայանի ջանքերով 1993 թ. գրողների միությունը և Հայաստանի գրողների միությունը թաղավարդի միջնակարգ դպրոցում անցկացրին բանաստեղծի ծննդյան 90-ամյակին նվիրված

հանդիսություն։ Հանդիպմանը ներկա էին բանաստեղծ Բոգդան Ջանյանը, Հայկական հանրագիտարանի տնօրեն, գլխավոր խմբագիր Հովհաննես Այվազյանը, բանաստեղծներ՝ մշակույթի հայկական ֆոնդի նախագահ Արևշատ Ավագյանը, Հրաչյա Բեգլարյանը, Յուրի Սահակյանը, արձակագիր, հրապարակախոս Հրաչյա Մաթևոսյանը, Գրաշու ազգական Շահեն Ջիվանյանը, դպրոցի տնօրինությունը, աշակերտներ, համագյուղացիներ, Գրաշու պոեզիայի երկրպագուներ, ասմունքողներ, համայնքի մշակույթի տան ինքնագործ ստեղծագործական խումբը։

Այդ օրը թաղավարդն ապրում էր և ապրեցնում էր գրաշիական մոտիվներով։ Գրաշու հասակակիցները և համայնքի տարեցները, ոգևորված ծափերով, կատարվածով, մոռացել էին իրենց տարիքը և ապրում էին ներկայով, գրաշիական խանդավառությամբ։

«Կա՞, արդյոք, ավելի մեծ գնահատական, քան սիրելի գրչակցի խոսքը մեծ Վարպետի մասին», - գրել է Հայաստանի ժուռնալիստների միության անդամ, Արմենպրեսի պատվավոր անդամ, մեր հայրենակից Վանյա Սանթրյանը։

Մեր պոեզիայի խորունկ անտառում Քանի հազարան հավք է գեղգեղել, Սակայն ո՞վ երգեց քեզ պես դայլայլուն Երբ սրնգահար երգի լուսեղեն... («Բանաստեղծը»)

Աշոտ Գրաշին իր կենդանության օրոք շատ հարվածներ է ստացել։ Նրան ոմանք քննադատաբար մեղադրում էին և անընդունելի էին համարում արևելյան պոեզիային նրա նվիրված լինելու համար ու արհամարհանքով աշուղ անվանում։ Իբր աշուղ լինելը վատ բան է։ Են ո՞ր բանաստեղծը չի նախանձի Շերամի, Հավասու կամ Աշոտի նման աշուղների պոետական տողերին, երբ այսօր մեր աշուղների, ինչպես նաև Գրաշու խոսքերը մեր երգադարանի ամենասիրված երգերն են։ Անցան տարիներ, անցան նաև քննադատները, եկան նոր ժամանակներ, նոր կատարողներ, մշակույթի երիտասարդ տաղանդներ, և նրա տողերը նոր շունչ են ստանում՝ ավելի կատարելագործված, ավելի մշակված մատուցվելով մեր ժողովրդին։ Այն, ինչ ժողովրդական է, մնաց ժողովրդի մեջ, ապրեց ու այսօր էլ ապրում է և դեռ կապրի։

Մեծատաղանդ կոմպոզիտոր, երգահան Առնո Բաբաջանյանի և Ալեքսեյ Չեքիմյանի հորդորով և անմիջականությամբ Աշոտ Գրաշու շատ բանաստեղծություններ վերածվեցին երգերի։ Այսօր այդ երգերը առաջատար դիրք են զբաղեցնում հայ երգադարանում. «Շողոտ-շաղոտ» և տասնյակ այլ երգեր։ Ուզում եմ առանձնացնել նաև իր հայրենի երկրամասին նվիրած «Թաղավարդ» բանաստեղծությունը։

Գյարդան սարի սառն աղբյուրներ, սերն եք իմ, Դաշխա քարի զով գեփյուռներ, սերն եք իմ, Եղնիկների մութ անտառներ, սերն եք իմ, Շողեր, շաղեր, վարդի թաղեր Թաղավարդ։

Քեզ տեսնում եմ գարնան կանաչ շորերում, Գլխիդ ամպի ճերմակ շողեր, Թաղավարդ, Կեռասներիններն հուրիբում եմ ծորերում, Ականջներին կարմիր օղեր, Թաղավարդ։

Հարսանիք են հավքերն անում գարունքին, Ինձ կանչել են հավքերն իրենց հարսանքին, Հարսն արտույտն է, փեսան տատրակն, Դայլայլում են անուշ խաղեր, Թաղավարդ։

Սարում, ծորում գարուն, աշուն ու ամառ, Հասուն խոտեր, ծաղիկները անհամար, Հազար գույնի գորգ են գործում քեզ համար, Բլբուլների բախչա, բաղեր, Թաղավարդ։

Կարոտել եմ իմ լեռներին երկնահաս, Թաղավարդի աղբյուրներին քաղցրահամ, Նա Արցախի գարդերից է ոսկեվարս, Իր հովերով, իր զովերով Թաղավարդ։

(Թաղավարդը Աշոտ Գրաշու հայրական գյուղն է՝ Արցախի Մարտունու շրջանում։ Բանաստեղծությունը գրել է 1970թ. մայիսի 10-ին՝ իր ծննդյան օրը «Թաս աղբյուր» կոչված իր սիրած վայրում)։

Աշոտ Գրաշին այն գրողներից էր, որ չէր վախենում ճշմարտությունը ասելուց և ավելին. նա իր բանաստեղծական լեզվով համարձակություն ունեցավ ապացուցելու, որ ինքը փողոցային մեյքապահ հորինող չէ, այլ հային ու հայկականը արժևորողներից։ Եթե 40-50-ականների շատ գրաքննադատների գործերն այսօր թաղված են փոշու մեջ, ապա Աշոտ Գրաշու մի քանի տասնյակ բանաստեղծություններ ասմունքում են, երգում և որպես կարգախոս ու նշանաբան օգտագործում։ Դրանցից մեկն էլ «Անուշ Հայաստան»-ն է.

Ես ցուր եմ խմել ամեն աղբյուրից, Անուշ ակունքից, անուշ Հայաստան, Ինձ օրորել է ամեն մի ուռիդ, Արար-աշխարհից անուշ Հայաստան։

Ամպիդ արցունքը շաղկն է սրտիս, Առվիդ կարկասը տաղիկն է սրտիս, Քո այն չոր քարն էլ ծաղիկն է սրտիս, Ծուփ-ծուփ ծաղկունքից անուշ Հայաստան։

Դու ծառաստան ես, ես՝ ծառ գարունքիդ, Նվազարան ես, ես՝ լար գարունքիդ, Նոր երգարան ես, ես՝ բառ գարունքիդ, Հազար մի երգից անուշ Հայաստան։

Գրաշիական քննադատները, օգտագործելով դեպի վեր սլանալու սույն առիթը, փորձեցին և փորձվեցին։ Ժամանակն է բուժել բոլոր վերքերը, քանի որ անցյալի սառույցն արդեն հալվել է։

Քննադատությունը՝ քննադատներին, այսօր էլ իրենք են հայտնվել արդարության և անարդարության միջանկյալ քավարանում։

Ինչևիցե։ Ներկայացնելով Աշոտ Գրաշու անցած ստեղծագործական ուղու մի հատված՝ նվիրված ծննդյան 110-ամյակին, ուզում եմ ակնառեսի աչքերով ու վկայություններով ներկայացնել երկու հանդիպում հայրենի Թաղավարդ գյուղում։

Պատմում է Սուսաննա Շահրամանյանը. - 1960 թվականն էր։ Ես 4-5 տարեկան մանկապարտեզի սան էի, երբ մի օր մանկապարտեզում հյուրընկալվեցին երկու տարեց մարդիկ։ Շատ սիրալիկ բարեկեցիկ հետո նստեցին, իսկ մենք՝ փոքրիկներս, մնացինք կանգնած։ Այդ տարեցներից մեկը, որ ավելի մանկասեր էր երևում, մոտեցավ ինձ, իսկ ես կանգնած էի առջևից, ու հարցրեց.

- Անունդ ի՞նչ է։ - Սուսաննա,- ասացի։ - Իսկ կասե՞ս ով է Թումանյանը։ Ես ավելի համարձակ, առանց ինձ կորցնելու սկսեցի.

Ժամանակով կատուն ճոն էր, Շունն էլ գլխին գդակ չուներ... Հյուրերը զարմացած ու նաև հիացմունքով ծիծաղում էին և ծափահարում։

Եվ երկուսը միասին «ապրես, բալիկս» ասելով սկսեցին իրենց գրույցը մեր դաստիարակների հետ։ Հյուրերից մեկը Աշոտ Գրաշին էր, մյուսը՝ Գուրգեն Գաբրիելյանը։ Այդ օրը ես երկու նվեր ստացա, մեկը՝ «մալադեց», մյուսն էլ մեծ պատիվ՝ հետագայում իմ հուշատետրում գրառում կատարելու, և այն դարձավ Աշոտ Գրաշու հետ մեր առաջին հանդիպումը, որը դարձավ նաև վերջինը։

Ոչ պակաս հանդիպում եղավ Ալեքսեյ Չեքիմյանի հետ տարիներ անց։ Նա սրտանց ցանկացել էր հանդիպել Աշոտ Գրաշու հայրենի թաղավարդիցիների հետ, ու այն կայացավ։ Նա առաջարկեց դպրոցը կոչել Աշոտ Գրաշու անունով։ Այսօր ամեն մի համագյուղացի, որն ավարտել է մեր դպրոցը, մեծ հպարտություն

և պատիվ է համարում լինել նրա պատվավոր շրջանավարտը։

Երրորդ հիշողությունն այն է, որ 1970թ. բախտ եմ ունեցել հանդիպել Ա. Գրաշուն իրենց տանը, ընտանիքի հետ, Լևոն և Կարեն որդիների ու տիկին Մարգարիտայի հետ, որը Գրաշու մեծ խորհրդատուն էր։

Տիկին Մարգարիտան բավականին հարգված, դաստիարակված, առաքինի անձնավորություն էր, ճաշակով պահել ու պահպանել է Գրաշու անտիպ ծեռագրերը և մեծ վստահությամբ հանձնել Վանյա Սանթրյանին հետմահու տպագրության հանձնելու նպատակով։ Ու այսօր ընթերցողի սեղանին է դրված «Արի գնանք Ղարաբաղ» ավելի քան 400 էջանոց ժողովածուն։

Որդիները՝ Լևոնն ու Կարենը, հանրապետությունում հայտնի շախմատիստներ էին մեծ նվաճումներով։ Կարենը Հայաստանի շախմատիստների միության անդամ էր, հանրապետության բազմակի չեմպիոն ու գավաթակիր, Լևոնը՝ ընդամենը։ Ցավոք, երկուսն էլ այսօր երջանակահիշատակ են։

Եվ ուզում եմ մի համեմատություն անել. ծիշտ այնպես, ինչպես տաղանդավոր նկարիչ Մինաս Ավետիսյանի, Պարոյր Սևակի և այլոց նկատմամբ էին տրամադրված ոմանք՝ կատարելով պատվեր, նույնը եղավ Աշոտ Գրաշու հետ։ Սակայն Գրաշին տիպիկ ղարաբաղցու համառությամբ շարունակեց ստեղծագործել՝ օր օրի ավելի դիպուկ հարվածելով նշանակետին։ Այդպիսով, նա դարձավ անդրդվելի, կոտորվեց, բայց չջարդվեց, եթե ջարդվեց, չփշրվեց։

Նրա հիշողություններում էին Իվան Թևոսյանը, Հովհաննես Բաբաջանյանը, Մինաս Ավետիսյանը, Պարոյր Սևակը, Գաբրիել Նժդեհը, Վահան Տերյանը, Ակսել Բակունցը, Արմենակ Խանփերյանը, ովքեր գաղափարախոսության գոհեր դարձան։ Այստեղ տեղին է մեջբերել ժողովրդի իմաստուն խոսքը. «Ջուրը իր հունով է գնում»։

Ես ամենակին նպատակ չունեմ Աշոտ Գրաշուն անդրադառնալ գրաքննադատների դատին արժանացած փաստերով։ Ընդհակառակը, ուզում եմ ներկայացնել Գրաշու ժայռի նման կարծի և տոկուն հատկանիշները։ Անկոտորուն, բայց և փխրուն բնավորությամբ նա կարողացել է տանել բոլոր հարվածները՝ չընդհատելով ստեղծագործական ընթացքը և շարունակել կենարար պահել իր ստեղծագործական աղբյուրը։

Երկու ուրիշ գրաշիական քննադատներ, որոնք հետագայում մեր գրականության անվանիներ դարձան, պարզապես հողին են հասարեցրել բանաստեղծին։ Ես չեմ ուզում անուններ տալ, քանի որ նրանք այլևս չկան, և պետք չէ տրորել անցյալը։

«Գաղափարական խորության և նպատակալացության բացակայություն, սովետական մարդու, նրա խոհերի ու ապրումների անտեսում, իրականության հրատապ հարցերից հեռանալու և բնության մեջ իր ես-ն ամփոփելու ուժեղ տենդենց, անկունային տրամադրություններ, անցյալի ժառանգության մեխանիկական օգտագործում. ահա այն բնորոշ գծերը, որոնցով քննադատները պատրվակ էին դարձրել բանաստեղծին վարկաբեկելու ու նեմացնելու համար»։

Իսկ ես կասեի, որ այսօր Գրաշին մեզ հետ է, մեր շուրթերին, տեսախցիկի, միկրոֆոնի առաջ, երգի ու երաժշտության մեջ, ասմունքում, բանավոր և գրավոր խոսքում։ Հարց է ծագում. «Իսկ որտե՞ղ էք դուք, որ գրապահոցի անկյունում եք քաքնված անտեսանելի, անօգտագործելի, ասացեք, խնդրեմ, ես եղել եմ, ես կամ ու դեռ կլինեմ»։

Չմոռանանք, սակայն, որ գրաշիական նավարկությունը չի ավարտվել, նրա ընտանեկան պահոցներում հազարավոր անտիպ բանաստեղծություններ ու հիշողություններ կան, որ այսօր ենթակա են տպագրության, և նրա պատգամն էլ այդ էր. կգա ժամանակը, և կծնվեն նոր հատորներ։

ԼԵԶՎԱԿԱՆ

Մի անգամ բանաստեղծին հարցրել են, թե որտեղ է ապրում, և նա պատասխանել է. «Երևանում բնակվում եմ, Թաղավարդում ապրում, իմ հոգին ու միտքս իմ հայրենի Թաղավարդում է, նրա այգիներում, բաղ ու բախշաններում, լեռներում ու ձորերում»:

Նա ապրում էր Երևանում, բայց ամբողջ էությամբ Թաղավարդում էր: Նրա երևանյան տունը երևանաբնակ թաղավարդցիների հավաքատեղին էր:

Անսահման բարի մարդ էր. այս կարծիքին են Լևոն Միրիջանյանն ու Համո Կարճիկյանը, ֆիզիկոս Յուրի Նարինյանը, բարության գագաթ՝ լրացնում է լրագրող Հրանտ Լալայանցը:

Այն ժամանակվա Գրողների միության ողջույնից ուզում են մի փոքր ու քաղցրահամ մեջբերում անել. «Անվելով մեր դասական և ժողովրդական պոեզիայի մաքուր ակունքներից՝ Դուք Ձեր ստեղծագործական գործունեության մեջ հավատարիմ եք մնացել ճշմարիտ պոեզիայի բարձր սկզբունքներին»:

Փառք Ավետիք Իսահակյանին, որ տեր կանգնեց Աշոտ Գրաշու պոեզիային. «Նա գարնան արտույտի պես նետվեց երկինք՝ աշխարհով մեկ Ղարաբաղի գովքը հնչեցնելու»: Իսկ մոսկվացի պրոֆեսոր Արշալույս Արշարունին 1969թ. գրում է. «Գրաշու պոեզիայում... մեր առջև կանգնում է Հայաստանը իր բնաշխարհիկ կախարհաբերով, երփներանգ սքեմ հագած Գեղարդը, ուր «հակինթ է թափում աշունը գվարթ»:

1970-ին Հելսնկի Ռշտունին գրում է. «Արցախում վառվող մայրամուտի հորիզոնը՝ ինչպես «կարմիր թոն, փայլող նուր կամ մորի, կամ ինչպես աշնան անտառի հոն»:

Իմ սեղանին է Աշոտ Գրաշու «Արի գնանք Ղարաբաղ» հատընտիրը, որը բանաստեղծի ծննդյան 100-ամյակի կապակցությամբ կազմել է Վանիկ Սանթրյանը, որտեղ ընթերցողը կարող է գտնել սրտամոտ թեմաներ, պատկերներ, համեմատություններ, մարդու և բնության ներդաշնակություն, կյանքի ու մահվան խոհ և այլն:

Աշոտ Գրաշու բանաստեղծություններում շատ ենք հանդիպում դեպի Ղարաբաղ, դեպի հայրենի համազրված հրավերականչի: Նա ուզում էր դարաբառյան հյուրասիրությամբ բոլորին հիացնել, զարմացնել հայոց չնաշխարհիկ եղեմական պարտեզով, որտեղ ապրում և արարում են սրբակյաց աշխատավոր, ազնիվ ու ճշմարտախոս մարդիկ, որոնք ապրում են առօրյա կյանքով, ապագայի երազանքով:

Հայաստանի լեռները ձեզ կանչում են, եկեք տուն,
Եկեք ամռան աստղերի երամներով լուսագին,
Եկեք, իմ լավ եղբայրներ, վտարանդի և տրտում,
Ձեր դարձին ենք սպասում հայոց ճերմակ ճամփեքին:

Աշոտ Գրաշին իր բնակարանում մի գեղեցկագարդ տուփի մեջ մի սրբություն էր պահում և ամեն պահի մոտենում բարևում, համբուրում էր: Այն կոչվում էր հայրենի հող:

Ահա հենց այդ էր Գրաշու վերջին խնդրանքը, որ այդ հողը պիտի շաղ տրվի իր և որդիների գերեզմաններին որպես հողաշեն խունկ:

Եվ այդպես էլ արվեց: Մի ցրտաշունչ օր էր, երբ այդ վերջին խնդրանքը կատարվեց, տարիների գաղտնիքը բոլորին բացահայտվեց:

Չմեռվա այդ ցուրտ օրը Գրաշու աճյունը հուղարկավորեցինք Երևանի Թոխմախի՝ հայ մշակույթի գործիչների պանթեոնում՝ Դերենիկ Դեմիրճյանի, Վաղարշակ Նորենցի, Արուս Ոսկանյանի, Հասմիկի և այլ մեծերի հարևանությամբ: Միակ միաթարությունը եղավ այն, որ Հիրմին դրվեց գյուղից բերված հայրենի հողը, որ որպես հոգու պահոց՝ բերել էր նրա ազգական, այսօր արդեն երջանկահիշատակ Շահեն Ջիվանյանը: Ա.Գրաշին ծնվել է մայիսի 9-ին: Այդ առթիվ են նվիրել են ահա այս տողերը.

Մայիսին բացվել է վարդը,
Մայիսին ծնվել է հանճարը...

Աշոտ Գրաշին մահացել է 1973 թվականին: Նա մահացել է, սակայն նոր կյանք է տվել ապրողներին, նոր շունչ ու զարդ է տվել բնությանը: Այսօր Թաղավարդի միջնակարգ դպրոցը կրում է մեր մեծ հայրենակցի անունը: Ես մեծ հպարտություն եմ ապրում, որ այդ դպրոցի շրջանավարտն եմ: Հենց դրա համար էլ Գրաշու ծննդյան 110-րդ տարեդարձին նվիրված այս փոքրիկ նվերը պատվով ներկայացնում եմ հանրությանը:

Գրաշու երգերը հագեցած են անմիջականությամբ, երիտասարդական թարմությամբ: Ընթերցելիս զգում ես ճշմարիտ բանաստեղծի սրտի բաբախումը: Նա վարպետորեն գովերգում է հայրենիքը, Հայաստան աշխարհն իր չնաշխարհիկ տեսարաններով, գործած գորգի նման դաշտերն ու մարգագետինները, դարերից եկած ու վկայություն բերող և հաստատող լեռներն ու սարերը, կարկաչուն գետակներն ու առվակները, գարնան ու աշնան, անռան ու ծմռան դրախտային պատկերներն ու շատ հեռվում մշմարված հորիզոնն ու երկնակամարը, անձրևից ծնված ծիածանները, գիշերային լուսաշող աստղերն ու լուսատուները:

Գրաշին խոսում էր և այսօր էլ խոսում է ժողովրդի հետ, կիսվում ու բազմապատկվում, խորհում է ու խորհրդակցում:

Հիշենք նրա «Ազգ իմ փառապանծ» բանաստեղծությունը, որտեղ հանդիպում են բյուրեղային միտքն ու ոսկեփայլ շողջողուն ցանկությունները: Ճշմարտախոս ու ազնվատենչ խոսքի սերմնացանը գրում է.

Փառքը թռչում է, երգը կանչում է,
Հողդ դարձել է ծով գանձ,
Միրտը կայտառ է, միտքդ պայծառ է,
Ազգ իմ փառապանծ:

Եվ ոչ մի բանաստեղծ այդքան տիպական, այդքան սլացիկ չի արտահայտվել , ինչքան Գրաշին թե՛ Հայաստանի և թե՛ Ղարաբաղի գովքի դարբնոցում:

Որքան իշխանավորները և իշխանավոր գաղափարախոսները ցանկացել են տարանջատել ու մաս-մաս բաժանել, Գրաշին իր խոսում գրչով կամրջաշինության կոչ է արել Հայաստանի ու Ղարաբաղի աթեիստ իշխանավորներին՝ ասելով.

«Հայաստանն ու Ղարաբաղը մի մարմին են ու մի հոգի, մի ծնունդ են ու մի կյանք»: Աղբրեջանի ազգայնական դեկավարությունը հարվածի տակ էր պահում մեծ հայրենասերին, և ազգային երգիչն ու խոսնակը ամեն անգամ ելքը տեսնում էր հայի ու հայկականության հորիզոնականում՝ կերտելով հայ գրականության խոսքի ու մտքի այն խորախորհուրդ տաճարը, որտեղ քահանայապետը հայն է, հավատքը հայկականն է, աղոթքը հայախոս է, իսկ խնկարկունը՝ հայաբուրմունք, ծուխը հայածածան, մկրտությունը՝ հայաջուր ու հայամեռուն:

Յուրա ԲԵՂԱՐՅԱՆ
Թոշակառու մանկավարժ
Գ. Թաղավարդ

ՀՈՐԴՈՐԱԿ

«Մոտ» բառի սխալ գործածության մասին: Հորդորակը ներկայացնում ենք ստորև.

«Մոտ» կապը թե՛ բանավոր, թե՛ գրավոր խոսքում հաճախադեպ է: Այս բառի գործածության սխալների մասին խոսվել է տարբեր առիթներով, սակայն անհրաժեշտություն կա դրանց կրկին անդրադառնալու:

Նախ ներկայացնենք բառի հիմնական իմաստները: Ըստ «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի»՝ **մոտ**-ը նշանակում է՝ *կողքին, կողքը, ոչ հեռավոր, մտերիմ, զրեթե, մոտավորապես, ներկայությամբ, հարակից* և այլն: Այն սխալները, որոնց մասին կխոսենք, առնչություն չունեն բառի ո՛չ այս և ո՛չ էլ այն իմաստների հետ, որոնք չիղատակեցինք:

Ներկայացնենք հանդիպող հիմնական դեպքերը.

1. «Մոտ» բառն ավելորդ է, գործածվում է անհարկի: Օրինակ.

Առայժմ դա նրանց մոտ չի հաջողվում:
Հաղթողների մոտ տրամադրությունը միշտ էլ բարձր է:

Այս նախադասություններում ամեն բան տեղը կընկնի, եթե **մոտ**-ը չգործածվի.

Առայժմ դա նրանց չի հաջողվում:
Հաղթողների տրամադրությունը միշտ էլ բարձր է:

2. Նախադասությունը սխալ է ձևակերպված: Այսպես.

Խաղից դուրս վիճակ է արձանագրել մրցավարը հարձակվողի մոտ:

Միս ուտելուց հետո այդ տեսակի շների մոտ նյարդային համակարգը խանգարվում է:

Փորձի պակաս կա երիտասարդ մասնագետների մոտ:

Հարձակվողի մոտ խաղից դուրս վիճակ արձանագրել նշանակում է նրա մոտ կանգնած արձանագրել, որ ֆուտբոլիստը խաղից դուրս է: Նյարդային համակարգի խանգարումը ոչ թե շների մոտ է, այլ նրանք ունենում են այդ խանգարումը: Իսկ երրորդ նախադասությունը, կարծում ենք, մեկնաբանության կարիք չի էլ զգում:

Պետք է լինեք այսպես.

Մրցավարն արձանագրել է, որ հարձակվողը խաղից դուրս վիճակում է:

Միս ուտելուց հետո այդ տեսակի շների նյարդային համակարգը խանգարվում է:

Փորձի պակաս ունեն երիտասարդ մասնագետները:

Այդպես էլ սխալ են.

Հիվանդների մոտ լինում է գլխացավ:
Ինձ մոտ սրտխառնոց է առաջանում:

Այս մտքերը պետք է ձևակերպվեն այսպես.

Հիվանդները գլխացավ են ունենում:
Ես սրտխառնոց եմ ունենում:

3.Մոտ-ը գործածվում է մեջ-ի փոխարեն: Օրինակ.

Ինձ մոտ մի միտք ծագեց:
Արվեստագետների մոտ խանդի զգացումն ուժեղ է արտահայտվում:

Ռուսական արբանյակի մոտ շարժիչի խնդիրներ են ի հայտ եկել:

Այս դեպքերում ճիշտ կլինի գործածել «մեջ» բառը կամ ներգոյական հոլովով բառ.

Իմ մեջ մի միտք ծագեց:
Արվեստագետների մեջ խանդի զգացումն ուժեղ է արտահայտվում:

Ռուսական արբանյակում շարժիչի խնդիրներ են ի հայտ եկել:

4. Նախադասությունն ամբողջովին պատճենվում է ռուսերենից: Օրինակ.

Դու ե՞րբ ես լինելու քեզ մոտ:
Տնօրենն իր մոտ է:
Ես կլինեմ ինձ մոտ:

Մեր լեզվամտածողությամբ մարդն ինքն իր

մոտ լինել չի կարող: Այսպես ասելիս սովորաբար նկատի են ունենում աշխատասենյակում, առանձնասենյակում, տեղում լինելը: Հենց այդ բառերն էլ պետք է գործածել.

Դու ե՞րբ ես լինելու քո աշխատասենյակում:
Տնօրենն իր տեղում է:
Ես կլինեմ իմ առանձնասենյակում:

5. Մոտ-ը գործածվում է «համար», «շրջա-նում» բառերի փոխարեն: Այսպես.

Գայլերի մոտ դժվար է վազել ձյան վրայով:
Մեկ փոփոխության հնարավորություն կմնա Վենզերի մոտ:

Գյուղացիների մոտ դա անհանգստություն է առաջացրել:

Այս նախադասությունները ճիշտ հայերեն կլինեն այսպես.

Գայլերի համար դժվար է վազել ձյան վրայով: Կամ *Գայլերը դժվար են վազում ձյան վրայով:*

Վենզերի համար մեկ փոփոխության հնարավորություն կմնա:

Գյուղացիների շրջանում դա անհանգստություն է առաջացրել:

Իհարկե, վերջին օրինակում *մոտ*-ը կարող է ունենալ նաև մեջ-ի իմաստը:

6. «Մոտ» բառը սխալ ձևեր է կազմում «ստացվել» բառի հետ: Օրինակ.

Ոչինչ չի ստացվում նրանց մոտ:
Այսօր աշխարհի լավագույն ֆուտբոլիստի մոտ չստացվեց լավ խաղալ:

Սրանք ևս անհարազատ՝ օտար լեզվամտածողության հետևանք են, ընդ որում, սխալ է գործածված նաև «ստացվել» բառը: Հաջողվել-ը կարծես մոռացվել է. ամեն բան ստացվում կամ չի ստացվում:

Վերևում բերված նախադասությունները ճիշտ են այսպես.

Նրանց ոչինչ չի հաջողվում:
Այսօր աշխարհի լավագույն ֆուտբոլիստին չհաջողվեց լավ խաղալ:

Օտար բառերի հայերեն համարժեքներ.

այլանս - միություն, դաշինք
բաններ - ցուցապաստառ
բեյջ - անվանաքարտ

կլան - կամար, կամարանցում
դերմատոլոգ - մաշկաբան
դիսոնանս - աններդաշնակություն

թինեյջեր - դեռահաս, պատանի
ինաուգուրացիա - պաշտոնակալություն,
երդմակալություն

իդենտիֆիկացիա - նույնականացում,
նույնացում

ինտերպրետացիա - մեկնաբանություն
կալկուլյատոր - հաշվիչ

կնոպկա - 1. կոճակ, 2. կոճգամ
կոնսենսուս - համաձայնություն
կրիտերիա - չափանիշ

մեյքափ - դիմահարդարանք,
դիմահարդարում

միսիա - առաքելություն
նոմինացիա - անվանակարգ

չաթ - գրուցարան
պարոլ (ռազմ.) - անցաբառ, նշանաբառ

պեյզաժ - բնանկար, բնապատկեր
պրեզենտացիա - շնորհանդես, ներկայացում
պրոֆեսիոնալ - արհեստավարժ

ռեսթալինգ - ոճափոխություն
սկեպտիկ - կասկածամիտ, թերահավատ


վերբալ - խոսքային, բանավոր
քոմենթ - մեկնաբանություն
օնկոլոգ - ուռուցքաբան

օրիենտացիա - կողմնորոշում
օֆիցիալ - պաշտոնական
ֆիլտր - գտիչ

Լեզվի կոմիտե

ՕՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՄԿՏԻ ՀԻՇԱՐԺԱՆ ՕՐԵՐԻՑ



Սկիզբը՝ «Լուսարար»-ի հ. հ. 6-10-ում:

9 հոկտեմբերի, շաբաթ

Նստած դաս էի սովորում, երբ որոշեցի մի քիչ, այսպես ասած, մաքուր օդ շնչել: Մոտեցա պատուհանին և հայացք նետեցի գետնին: Հանկարծ նկատեցի մի կանաչ բան՝ դանդաղ շարժվելիս: Կարծեցի մորեխ է, բայց ուշադիր նայելուց տեսա, որ գույնը փոխում է: Կասկած չկար, որ դա քամելն է: Մի շիշ վերցրի և վազեցի բերելու: Հենց մոտեցա, դարձավ սև սաթ՝ պոչը կեռ արած: Մի կերպ բռնեցի և մտցրի շիշ մեջ ու բերեցի սենյակ: Ամբողջ Մելքոնյանը գլխիս հավաքվեց: Արտասովոր կենդանի էր օրվա հերոսը՝ քամելնեղը:

Որոշեցի պահել: Մի տուփից բույն սարքեցի՝ մեջը տարբեր ձևավորումներով, տարբեր տեսակի, կոր և ուղիղ, ճյուղեր էի դրել, մի քանի քարեր, իսկ ամենատակի՞ն՝ կանաչ խոտ:

Չէր շարժվում: Վախեցած էր, մարդկային դեմք չէր տեսել: Չէր տեսել, որ իրենց այդ ձևով տիրապետեն:

Փոքր թիթեռներ բռնեցինք և դեմ արեցինք, և նա կերավ: Ուրեմն՝ այնքան էր սոված, որ մույնիսկ ամտեսելով երկուողը՝ հարձակվեց: Փոքր արտին հաղթեց:

Երեկոյան դեմ տուփի վերևի մասով թափանցիկ կտոր փռեցինք (մառլա) և պառկեցինք:

10 հոկտեմբերի, կիրակի

Երբ արթնացանք, չկարողացանք գտնել նրան՝ ամբողջովին ընդունել էր հատակի գույնը՝ կանաչը: Նա ամբողջովին թզկած էր՝ ամբողջ մարմնով կծկված:

Ոչինչ չկերավ այդ օրը: Մենք ավելի շատ մտահոգվեցինք: Եթե այդպես գնար, պիտի սատկեր: Եվ մենք որոշեցինք բաց թողնել:

Երբ քամելնեղն արդեն հողի վրա էր, երևաց հայաստանցիներից մեկը՝ Հայկը: Նա խնդրեց իրեն տալ քամելնեղը: Մենք չէինք կարող մերժել նրա խնդրիցը: Եվ խոստացանք նրան տալ:

Նա հայտնեց, որ մեզ մոտ պահենք քամելնեղը, մինչև ինքը մեծ տուփ կգտնի: Բայց մեր մեջ երկմտություն կար՝ տալ, թե՛ չտալ: Որոշեցինք չտալ, քանի որ գիտեինք, որ պիտի չկարողանար պահել ինչպես հարկն է: Եվ այդպես էլ արեցինք: Քամելնեղին հանեցինք և դրեցինք պատշգամբին, իսկ ինքը պետք է իջներ ցած՝ սուր-սուր պատն ի վար:

Իսկ երբ եկավ Հայկը, մենք նրան մի կերպ համոզեցինք, որ քամելնեղը փախել է:

15 հոկտեմբերի, ուրբաթ

Ի տարբերություն, որ այդ օրը քաղաք երթալու օրն էր, չգնացինք:

18 հոկտեմբերի, երկուշաբթի

Այդ օրը հայոց լեզվի ուսուցչուհին չէր եկել, և նրան փոխարինում էր փոխտնօրենը: Շատ հաճելի էր նրա հետ զրուցելը՝ մանավանդ լեզվի մասին: Եվ նա շատ խելացի մտքեր հայտնեց լեզվի և հետևող շեղված թեմա-

ների մասին (այսինքն՝ հաճախ շեղվում էինք «Լեզու» թեմայից և մի ուրիշ թեմայի շուրջ խոսում):

20 հոկտեմբերի, չորեքշաբթի

Դասերից հետո գնացի գրադարան՝ անգլերեն ծրագրի համար: Դրական արդյունքներով վերադարձա:

Հայաստանցիներով մատած բլտ էինք խաղում, երբ ներս մտավ հերթապահը և վերցրեց խաղաթղթերը:

21 հոկտեմբերի, հինգշաբթի

Այդ օրը Միքայելի 15-ամյակն էր: Որոշել էր մշտել և տորթ գնեց: Իսկ մենք էլ որոշեցինք ստվերի տակ չմնալ և Առնոլդի ու Մայքլի հետ մկեր գնեցինք: Եվ շատ դժվարություն բերեց ինձ այդ մկերը:

Առաջին հերթին պետք է Առնոլդի հետ քաղաք գնայի: Եվ մկեր գնեցինք: Դա ձեռքի մի փոքրիկ հուշատետր է՝ բազմաթիվ դիզայնով և արտաքինով պատած կաշվով:

Իսկ հետո երբ բերեցի, պետք էր աննկատ անցկացնել սենյակ: Իսկ դա այնքան էլ հեշտ չէր, քանի որ Միքայելը մուտքի առջև հեռագանգի էր սպասում: Սակայն այդ էլ հաջողվեց:

Իսկ երեկոյան մկերը նրան հանձնեցինք՝ ստանալով մեր բաժին տորթը:

22 հոկտեմբերի, ուրբաթ

Այդ օրն ուրբաթ էր, այսինքն՝ մեր քաղաք գնալու օրը: Թեև մեզ թույլատրվում էր ամիսը մեկ անգամ քաղաք գնալ, բայց մենք, համոզվելով հերթապահին, գնացինք:

Խորություններ չկային, նույն քաղաքն էր՝ նույն աղմուկով:

Ընթրիքից հետո մեզ հրահանգեցին պատրաստվել գնալու մնջախաղի, որ պիտի ներկայացներ էդիկ Ղազարյանը:

Բավականին հետաքրքիր էր, քանի որ առաջին անգամ էի մնջախաղ դիտում:

23 հոկտեմբերի, շաբաթ

Փողային նվազախմբի ուսուցիչը եկել է, և իմ 2-րդ ուսումնական տարեշրջանին առաջին անգամ գնացի փողային նվազախմբի:

27 հոկտեմբերի, չորեքշաբթի

Այդ օրը մի շաբթ կարևոր բաներ պատահեցին, որոնք հավանաբար տարվա կարևորագույն իրադարձություններից էին: Նախ և առաջ հայերենի պահին հանդիպում ունեցանք մեծ գրագետ Պողոս Սնայանի հետ՝ լիբանանցի: Խոսեցինք տարբեր թեմաների շուրջ:

Իսկ վերջում ամենակարևորը. «Հայկուրից» իմացանք, որ Ազգային ժողովի նիստում 5 ահաբեկիչներ հանկարծակի են բերել անդամներին, սպանել են Վազգեն Սարգսյանին, Կարեն Դեմիրճյանին, Լեոնարդ Պետրոսյանին, մյուսի անունը չեմ ինչու:

Այնուամենայնիվ՝ յուրաքանչյուր 30 րոպեն մեկ ուշադրությամբ լսում էինք ամեն մի նորություն (բայց մինչև սերտությունը): Իսկ ավելին իմանալու համար, երբ դռները փակվեցին, թույլտվություն վերցրինք և գնացինք ակումբ:

28 հոկտեմբերի, հինգշաբթի

Հայաստանցի տղաներից մեկը՝ Արմենը, հրավիրել էր իր սենյակ և պիցա պատիվ տվել: Անշուշտ հարց է ծագում՝ ինչո՞ւ: Քանի որ այդ օրը նա իմացավ, որ իր քեռին դարձել է կաթողիկոս: Իսկ նրա երկրորդային քույրը,

այսինքն՝ կաթողիկոսի եղբոր աղջիկը, աղջիկների շենքում էր պատիվ տվել: Ի միջի այլոց, երկուսն էլ էջմիածնում են բնակվում:

29 հոկտեմբերի, ուրբաթ

Այդ օրը դպրոց չգնացինք, այլ՝ արշավի՝ համայն աշակերտությամբ և ուսուցչական կազմով:

Ինչպես անցյալ տարի, այս տարի ևս գնացինք Թորոնս՝ Կիպրոսի լեռնային և անտառոտ մասը:

6 նոյեմբերի, շաբաթ

Այդ օրը մենք ֆուտբոլի խմբով ընկերական խաղ ունեցանք «Նարեկ» վարժարանի աշակերտների «Արարատ» խմբի հետ: Անշուշտ, հաղթեցինք:

7 նոյեմբերի, կիրակի

Առավոտ էր: Ես և հունահայ մի տղա գնում էինք եկեղեցի: Դպրոցի մուտքից ոչ շատ հեռու մի մարդու հանդիպեցինք երկու փոքր շների հետ: Շներից մեկը եկավ և հոտոտեց ոտքերս, հետո սկսեց հաչել:

- Երևում է՝ հայեր եք,- խոսեց հանկարծ մարդը պարզ արևելահայերենով:

- Ինչպե՞ս իմացաք,- զարմացանք մենք:

- Շները մատնեցին,- ասաց նա առանց զարմանալու: Այս շները ճանաչում են հայերին: Սրանք հայկական շներ են:

Մի քիչ հետո նա իր շների հետ միասին թեքվեց մայր ճանապարհից և անհետացավ:

13 նոյեմբերի, շաբաթ

Երկրորդ անգամ Մելքոնյանի մեջ «Ձվաթք երեկո» կազմակերպվեց՝ ինչ-որ տոնի առթիվ: Այդ օրը պետք է (ըստ ցանկության) ծպտված գայինք: Այսինքն՝ որևէ բան նշանակող շորեր հագնեցինք, օրինակ՝ մի նորեկ տղա, ի միջի այլոց հայաստանցի, ծպտված Zorro-ի շորերի մեջ, հաղթեց և շահեց մրցանակը:

21 նոյեմբերի, կիրակի

Այս օրը Սուրբ Աստվածածնի օրն էր, և եկեղեցում տոնական պատարագ էր կազմակերպվել: Իսկ պատարագից հետո մատաղ էր՝ հաց ու հավի միս: Իսկ վերջինս լցրած մի տեսակ հացի մեջ, որ հեշտությամբ բաժանվում է երկու մասի, մեջտեղում թողնում մի անցք՝ ետևում փակ:

22 նոյեմբերի, երկուշաբթի

Մեր ֆուտբոլի գլխավոր մարզիչը խաղ էր կազմակերպել, որը պիտի կայանար այդ օրը (ավելի ճիշտ՝ առաջին խաղը), բազմաթիվ խաղեր պիտի խաղայինք (լիգա):

1 դեկտեմբերի, չորեքշաբթի

Այդ օրը վերջացան ֆուտբոլի խաղերը: Մեղավներ ստացան միայն առաջին երկու տեղերը՝ գրադեքորած խմբերը: Իմ խումբը (իմ խումբը, որովհետև ես ավագն էի) չխաղաց, որոշելու համար 3-րդն է՞մք, թե՛ 4-րդը:

3 դեկտեմբերի, ուրբաթ

Մեր անգլերենի նոր ուսուցիչը հանձն էր առել մեզ առաջնորդել այդ գիշեր դուրս գալու համար քաղաք և պտտվելու:

Սկզբում գնացինք «Pizza Inn» (Inn-տուն), կերանք հանրահայտ պիցան (սեփական փողով, անգլերենի ուսուցչուհին միայն առաջնորդում էր, ոչ վճարում մեզ համար):

Հետո մեկ ժամ ժամանակ ունեինք քաղաքում պտտվելու:

Մինչ երեկո քաղաք էինք դուրս եկել առանց անգլերենի ուսուցչուհու, այսինքն՝ ինքներս մեզ՝ ուրբաթ օրը: Քաղաքում մի մարդ տեսա գիրք վաճառելիս: Մոտեցա և կարդացի գրքի վերնագիրը՝ «I don't speak Greek»՝ «Ես չեմ խոսում հունարեն»: Կարծեցի, թե հունարեն սովորեցնող գիրք է, բայց երբ գնեցի, տեսա, որ սովորական գիրք է:

Երբ ուզում էի ցած դնել, վաճառողը վեր կացավ և ասաց, որ այդ գրքի հեղինակն ինքն է, և գիրքը Կիպրոսի դժվարությունների, պորթլեմների մասին է՝ իր աչքերով: Նա մվիրեց ինձ այդ գրքերից մեկը և ասաց, որ գրքերը ձրի են:

Կյանքում այդպիսի դեպքի առաջին անգամ էի հանդիպում:

5 դեկտեմբերի, կիրակի

Լսելով, որ պարի խումբը փորձեր է անում վալսի համար, անհապաղ որոշեցի միանալ. գոնե վալս սովորելի (չէի ուզում մնացած պարերը սովորել) և դուրս գալի պարախմբից: Սակայն պարուսույցը պայման կապեց՝ կամ-չգամ, կամ գամ, բայց՝ միշտ: Ես ընտրեցի վերջինը:

Մանր-մունր բաներ էին պատահում, ոչ շատ կարևոր:

11 դեկտեմբերի, շաբաթ

Անսպասելի պատահար: 3-ի-4-ի մոտերը Առնոլդը եկավ և ասաց. - Շտապիր, մի դարաբաղի մարդ թեզ է ուզում:

Ես ամենայն ուժով վազեցի դուրս և տեսա ակնոցավոր մի մարդու: Նա հարցրեց.

- Դու Սամվել Գաբրիելյան անուն-ազգանունով ազգական ունե՞ս:

- Այո, ունեմ,- կասկածելով ասացի ես: Ձրույցի մեջ խորացանք, և ես հասկացա, որ այդ մարդու աղջիկը մշակած Սամվել Գաբրիելյանի նշանածն է:

Ես շփոթվեցի մի պահ: Ինչքան գիտեի, ես Սամվել Գաբրիելյան ազգական ունեի, բայց՝ հասակից առած մարդ:

- Ա՛, դա իմ բարեկամն է, իմ հորաքրոջ տղան,- անսպասելիորեն մեջ մտավ Միքայելը:

Բոլորս ծիծաղեցինք: Փաստորեն Միքայելը չէր ճանաչում, որ ինքը Սամվել Գաբրիելյան ազգական ունի: Սակայն երբ լսեց, որ նշանված է, իսկույն հասկացավ:

Այսինքն՝ Միքայելը այդ մարդու բարեկամն էր:

Երկար խոսեցինք դարաբաղերենով: Մարդը ներկայացավ.

- Ես նկարիչ եմ, անունս՝ Սամվել Գաբրիելյան: Այստեղ եմ եկել նկարներս ցուցադրելու: Եթե ուզում եք, կարող եք գալ և նայել իմ գործերը: Ցուցասրահը բաց է 5-ից 8.30-ը:

Ժամը 5-ը դեռ չկար, երբ ճամփա ընկանք «Վահան Յուրուճյան» սրահը՝ «Նարեկ» վարժարանի մոտ: Գնում էինք մեր «զեմյակի» գլխավորժողովները նայելու:

13 դեկտեմբերի, երկուշաբթի

Ընթրիք էր: Շտապելով ճաշարան՝ մտա և աջ անկյունում վեր կանգնած տեսա մի ամեհի տոնածառ:

Մելքոնյանը պատրաստվում էր նոր հազարանյակը թակոխելու:

(շարունակելի) Կրույր ԳԱՐԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՍՐԱԳԻՐ՝ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ | Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ | Ստեփանակերտ, Հ. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99, E-mail: gorcert@mail.ru: www.lusarar.info | Մեջբերումների և փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում: | Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլուս» ՄՊԸ-ում: Ծավալը՝ տպագրական 4 մամուլ: Ստորագրված է տպագրության 12.05.2020թ.: